Հայաստանի Հանրապետության նոր Սահմանադրության Նախագիծ

Նախաբան

Մենք՝ Հայաստանի Հանրապետության ժողովուրդը, հանուն մեր պետականության հարատևության ու զարգացման, առաջնորդվելով մեր միջազգայնորեն ճանաչված տարածքում անկախ, խաղաղ, անվտանգ, բարեկեցիկ պետություն կառուցելու առաքելությամբ և այդ պետությունը սերնդեսերունդ փոխանցելու հանձնառությամբ, ընդունում ենք Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը:
Սահմանադրությունը մեր հավաքական պայմանավորվածությունն է Հայաստանի Հանրապետության ներքին և արտաքին հարաբերությունների հիմնական սկզբունքների մասին:

Գլուխ 1. ՀԻՄՆԱՐԱՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության հիմնադիրը

1. Հայաստանի Հանրապետության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության ժողովուրդն է:

2. Ժողովուրդը Հայաստանի Հանրապետությունը հիմնադրել է իր անվտանգությունը, ազատությունը, բարեկեցությունը ապահովելու, ինքնությունը պաշտպանելու և զարգացնելու, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով: Այս նպատակի իրականացումը պետական շահ է:

Հոդված 2. Հայաստանի Հանրապետությունը

1. Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական, աշխարհիկ, սոցիալական պետություն է:

Հոդված 3. Ժողովուրդը՝ իշխանության տեր, կրող և աղբյուր

1. Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն է իշխանության տերը, կրողը և աղբյուրը:

2. Ժողովուրդը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հավաքական ամբողջությունն է:

3. Ժողովրդի իշխանությունն անօտարելի է և պաշտպանվում է Սահմանադրությամբ և օրենքներով:

Հոդված 4. Ժողովրդի իշխանության իրացումը

1. Ժողովուրդն իր իշխանությունն իրացնում է Սահմանադրության ընդունմամբ, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների, Սահմանադրությանն ու օրենքներին համապատասխան ձևավորված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, ինչպես նաև համապետական և տեղական հանրաքվեների միջոցով:

2. Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

3. Պետությունը երաշխավորում է ընտրություններին և հանրաքվեներին մասնակցող անձանց ազատ կամքի արտահայտումը և դրա ճշգրիտ արտացոլումը քվեարկության պաշտոնական արդյունքներում:

Հոդված 5. Իշխանությունների բաժանման, հավասարակշռման և սահմանափակման սկզբունքը

1. Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա:

2. Պետությունը երաշխավորում է տեղական ինքնակառավարումը՝ որպես ժողովրդավարության էական հիմքերից մեկը:

3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրենց գործունեությունն իրականացնելիս պարտավոր են առաջնորդվել հանրային շահով, հաշվետվողականության, բարեվարքության սկզբունքներով և սահմանափակված են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով:

4. Մարդու հիմնական իրավունքները և ազատությունները հարգելն ու պաշտպանելը պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների պարտականությունն են:

Հոդված 6. Իրավական համակարգը և օրինականության սկզբունքը

1. Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ: Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և սահմանադրական օրենքներին:

2. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, պաշտոնատար անձինք պարտավոր են հարգել և պահպանել Սահմանադրությունը և օրենքները և իրավասու են կատարելու այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

3. Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև Կառավարության անդամները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին և սահմանեն լիազորման շրջանակը: Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին և օրենքներին:

4. Օրենքները և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակվելուց հետո:

5. Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Վավերացված միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Հոդված 7. Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգը

1. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացումը պետական շահ է:

2. Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականությունների միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցության ապահովմանը և սոցիալական համերաշխության խթանմանը:

3. Սոցիալական համերաշխությունը հանրային և անհատական բարեկեցությունը ապահովելու՝ յուրաքանչյուր քաղաքացու անհատական ջանքի քաջալերման և այդ ջանքի արդյունքի վրա հիմնված բարեկեցություն կառուցելու սկզբունքն է:

4. Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը: Ընդերքը և ջրային ռեսուրսները պետության բացառիկ սեփականությունն են:

Հոդված 8. Արտաքին քաղաքականությունը

1. Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու և խաղաղություն ապահովելու նպատակով:

Հոդված 9. Զինված ուժերը

1. Զինված ուժերի նպատակը Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը, սահմանների անխախտելիությունը և անվտանգությունը պաշտպանելն է:

2. Հայաստանի Հանրապետության զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և քաղաքացիական վերահսկողության ներքո են:

Հոդված 10. Շրջակա միջավայրի պահպանությունը

1. Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև:

Հոդված 11. Ընտանիքի պաշտպանությունը

1. Ընտանիքը, որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և վերարտադրման հիմք, ինչպես նաև մայրությունը և մանկությունը պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են:

Հոդված 12. Պետական լեզուն, մշակույթի, կրթության, գիտության խթանումը

1. Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է:

2. Հայերենը և մշակութային ժառանգությունը պետության հոգածության և պաշտպանության ներքո են: Պետությունը խթանում է կրթության, գիտության և մշակույթի զարգացումը:

Հոդված 13. Հայկական սփյուռքի հետ կապերը

1. Հայաստանի Հանրապետությունը հայկական սփյուռքի հետ իրականացնում է համակողմանի կապերի զարգացմանը և հայկական ինքնության պահպանմանն ուղղված քաղաքականություն՝ որպես նպատակ ունենալով հայրենադարձությունը:

Հոդված 14. Պետությունը և կրոնական կազմակերպությունները

1. Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը: Կրոնական կազմակերպություններն անջատ են պետությունից:

Հոդված 15. Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին

1. Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում:

2. Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները կարգավորվում են օրենքով:

Հոդված 16. Հայաստանի Հանրապետության խորհրդանիշները

1. Հայաստանի Հանրապետության խորհրդանիշներն են զինանշանը, դրոշը և օրհներգը: Զինանշանի և դրոշի նկարագրությունը, ինչպես նաև օրհներգը սահմանվում են օրենքով, որն ընդունվում է հանրաքվեով:

Հոդված 17. Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանումը

1. Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են մարզերը և համայնքները: Վարչատարածքային բաժանումը, Կառավարության ներկայացմամբ, սահմանվում է օրենքով:

Հոդված 18. Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը

1. Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը Երևանն է:

Գլուխ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ, ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդված 19. Մարդը բարձրագույն արժեք

1. Մարդը բարձրագույն արժեք է և ազատ է անելու այն, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքին:

2. Բոլորը հավասար են օրենքի առջև:

3. Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն Սահմանադրությամբ կամ օրենքով:

4. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները գործում են անմիջականորեն:

5. Հայաստանի Հանրապետության քաղաքացիները Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, միջազգային իրավունքի հիման վրա, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո են:

Հոդված 20. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները

1. Մարդու հիմնական իրավունքներն ու ազատություններն են՝

1) կյանքի իրավունքը.

2) արժանապատվության իրավունքը. յուրաքանչյուր ոք արժանի է հարգանքի և հարգալից վերաբերմունքի, մարդու արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է.

3) ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը.

4) անձնական ազատության իրավունքը. անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի՝
ա. մարդասիրական վերաբերմունքի,
բ. իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվելու ազատությունից զրկվելու պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին,
գ. անձնական ազատությունից զրկված լինելու մասին անհապաղ անձամբ տեղեկացնելու իր ընտրած անձին. այս իրավունքի իրականացումը կարող է հետաձգվել օրենքով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետով՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակով,
դ. ազատությունից զրկվելու պահից ողջամիտ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամվա ընթացքում դատարանի կողմից նրան անազատության մեջ պահելը թույլատրելու մասին որոշում չկայացվելու դեպքում անհապաղ ազատ արձակվելու,
ե. վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, որի վերաբերյալ դատարանը սեղմ ժամկետում որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է.

5) ազատ տեղաշարժի իրավունքը. Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետությունում ազատ տեղաշարժվելու, բնակավայր ընտրելու և Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունք: Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու առանձնահատկությունները սահմանվում են օրենքով.

6) սեփականության իրավունքը. յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք: Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով.

7) մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը.

8) պատվի և բարի համբավի անձեռնմխելիության իրավունքը.

9) բնակարանի անձեռնմխելիության իրավունքը.

10) հաղորդակցության ազատության և գաղտնիության իրավունքը.

11) անձնական տվյալների պաշտպանության իրավունքը. անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, անձի համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ծանոթանալու անձնական տվյալներ մշակողների կողմից իր մասին հավաքված տվյալներին: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի պահանջելու ոչ հավաստի տվյալների շտկում, ինչպես նաև ապօրինի ձեռք բերված կամ այլևս իրավական հիմքեր չունեցող տվյալների վերացում.

12) տեղեկություններ փնտրելու, ստանալու իրավունքը. յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տվյալներին ծանոթանալու, տեղեկություններ ստանալու իրավունք.

13) ամուսնանալու ազատության իրավունքը. ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը միմյանց հետ իրենց կամքի ազատ արտահայտությամբ ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք ունեն.

14) քաղաքացիության իրավունքը, որը Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից ծնված երեխաներին տրվում է ինքնաբերաբար: Ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք են բերում օրենքով սահմանված պարզեցված կարգով: Քաղաքացիություն ձեռք բերելու և դադարեցնելու դեպքերը և ընթացակարգերը սահմանվում են օրենքով.

15) ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունքը. ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունք.

16) խղճի, կրոնի և համոզմունքների ազատության իրավունքը. յուրաքանչյուր ոք ազատ է իր կրոնի կամ համոզմունքների ընտրության մեջ: Յուրաքանչյուր ոք ազատ է իր կրոնը կամ համոզմունքները արտահայտելու մեջ: Յուրաքանչյուր քաղաքացի, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զինվորական ծառայությունը, ունի օրենքով սահմանված կարգով այն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու իրավունք.

17) կարծիք ունենալու և արտահայտելու իրավունքը. յուրաքանչյուր ոք կարող է ինքնուրույն ձևավորել իր կարծիքը: Յուրաքանչյուր ոք կարող է ազատորեն արտահայտել իր կարծիքը՝ ցանկացած ձևով և հաղորդակցության միջոցով, առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության.

18) պատշաճ վարչարարության իրավունքը. յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք.

19) վնասի հատուցման իրավունքը. յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք.

20) օրենքով սահմանված դեպքերում Մարդու իրավունքների հանձնակատարի աջակցությունը ստանալու իրավունքը.

21) դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը. յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր իրավունքները և ազատությունները պաշտպանելու անկախ, արդար և անաչառ դատարանում, ողջամիտ ժամկետներում և հրապարակային ձևով, ինչպես նաև բողոքարկելու դատական ակտերը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Օրենքով սահմանված դեպքերում գործի քննությունը կարող է իրականացվել գրավոր ընթացակարգով: Դռնփակ վարույթ կարող է անցկացվել վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով: Օրենքով նախատեսված դեպքերում դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը կարող է իրացվել նաև վեճի լուծման այլընտրանքային կառուցակարգերի միջոցով: Հայաստանի Հանրապետության վավերացված միջազգային պայմանագրերին համապատասխան՝ յուրաքանչյուր ոք կարող է իր իրավունքների պաշտպանության համար դիմել իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային ատյաններ.

22) իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը. պետությունը երաշխավորում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնություն ցույց է տրվում պետական միջոցների հաշվին.

23) քրեական մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը. հանցագործության համար մեղադրվող անձը ունի մեղադրանքից պաշտպանվելու իրավունք և համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ: Օրենքը կարող է սահմանել ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր.

24) առավել բարենպաստ օրենքի կիրառման իրավունքը. արարքի հանցավորությունը վերացնող կամ քրեական պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ: Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն, բացառությամբ եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում հանրության շահերի պաշտպանության համար: Անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով.

25) խաղաղ հավաքներ կազմակերպելու և դրանց ազատորեն մասնակցելու իրավունքը. բացօթյա տարածքներում կազմակերպվող հավաքներն օրենքով սահմանված դեպքերում անցկացվում են ողջամիտ ժամկետում ներկայացված իրազեկման հիման վրա, բացառությամբ ինքնաբուխ հավաքների, որոնց համար իրազեկում չի պահանջվում.

26) կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքը, որից օգտվում են քաղաքացիները.

27) միավորումներ ստեղծելու և դրանց անդամագրվելու ազատության իրավունքը.

28) ընտրելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունքը, որից օգտվում են 18 տարին լրացած քաղաքացիները, որոնք ընտրությանը կամ հանրաքվեին նախորդող երկու տարվա ընթացքում առնվազն մեկ տարի մշտապես բնակվել են Հայաստանի Հանրապետությունում, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների և տեղական հանրաքվեների պարագայում՝ նաև 18 տարին լրացած օտարերկրյա քաղաքացիները կամ քաղաքացիություն չունեցող անձինք, որոնք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությանը կամ տեղական հանրաքվեին նախորդող երկու տարվա ընթացքում առնվազն մեկ տարի մշտապես բնակվել են տվյալ համայնքում.

29) ընտրվելու իրավունքը, որից օգտվում են քաղաքացիները.

30) հանրային ծառայության անցնելու իրավունքը, որից օգտվում են քաղաքացիները. օրենքով կարող են սահմանվել օտարերկրյա քաղաքացիների հանրային ծառայության անցնելու դեպքերն ու առանձնահատկությունները.

31) քաղաքական ապաստան ստանալու իրավունքը, եթե հիմնավորվում է, որ որևէ այլ երկրում անձը ենթարկվում է քաղաքական հետապնդման: Քաղաքական ապաստանի տրամադրման կամ մերժման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով.

32) կրթության իրավունքը, որի իրացումը աշխատանքը արդյունավետ և բարեկեցությունը հասանելի դարձնելու միջոց է. հիմնական կրթությունը պարտադիր է: Պետությունը նպաստում է նախադպրոցական, մասնագիտական կրթության և ուսուցման, բուհական կրթության, ցկյանս կրթության գործիքների հասանելիությանը: Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունը իրականացվում է պետական բյուջեի հաշվին: Կրթական այլ ծրագրերը օրենքով սահմանված դեպքերում իրականացվում են պետական և համայնքային բյուջեի հաշվին.

33) աշխատանքի ազատ ընտրության իրավունքը, ինչպես նաև առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, հանգստի և ամենամյա վճարովի արձակուրդի իրավունքները. յուրաքանչյուր աշխատող ունի արժանապատիվ գոյության իրավունք: Աշխատողներն իրենց տնտեսական, սոցիալական կամ աշխատանքային

շահերի պաշտպանության նպատակով ունեն գործադուլի իրավունք: Աշխատանքից ազատման հիմքերը, նվազագույն աշխատավարձի չափը սահմանվում են օրենքով.

34) առողջության պահպանման իրավունքը. յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման, ներառյալ անհրաժեշտ բժշկական ծառայություններին հասանելիության իրավունք.

35) սոցիալական ապահովության իրավունքը. յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմազավակության, հաշմանդամության, ծերության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք.

36) տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը.

37) մտքի և ստեղծագործելու ազատությունը. յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության, գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունք:

Հոդված 21. Երեխայի իրավունքները

1. Երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում:

2. Երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան:

3. Յուրաքանչյուր երեխա ունի իր ծնողների հետ կանոնավոր անձնական փոխհարաբերություններ և անմիջական շփումներ պահպանելու իրավունք, բացառությամբ այն դեպքի, երբ դա, դատարանի որոշման համաձայն, հակասում է երեխայի լավագույն շահերին:

4. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաները պետության հատուկ հոգածության և պաշտպանության ներքո են:

Հոդված 22. Հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կառուցակարգը

1. Մարդու հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր:

2. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

3. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

4. Մարդու հիմնական իրավունքները, ազատությունները և պարտականությունները, ինչպես նաև արգելքներն ու սահմանափակումներն իրավաբանական անձանց վրա տարածվում են այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են իրավաբանական անձանց նկատմամբ:

Հոդված 23. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման և չարաշահման արգելքները

1. Հայաստանի Հանրապետությունում արգելվում են՝

1) մահապատիժը. ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի.

2) կամայական կերպով կյանքից զրկելը.

3) մարմնական պատիժները.

4) խոշտանգումը, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը.

5) խտրականությունը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից.

6) որևէ անհատի կամ խմբի իր կրոնից կամ կարծիքից կամ համոզմունքից հրաժարվելու կամ դրանք կամ դրանցից որևէ մեկը փոխելու հարկադրանքի կամ պարտադրանքի ենթարկելը.

7) եվգենիկական փորձերը, մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը, մարդու վերարտադրողական կլոնավորումը, առանց մարդու համաձայնության և հնարավոր հետևանքների մասին համապարփակ իրազեկման՝ մարդուն գիտական, բժշկական կամ այլ փորձերի ենթարկելը.

8) հիմնական իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու, ինչպես նաև այլոց իրավունքներն ու ազատությունները ոտնահարելու նպատակով.

9) քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու իրավունքը սահմանափակելը.

10) որևէ անձի արտաքսելը կամ հանձնելը օտարերկրյա պետության, եթե իրական սպառնալիք կա, որ տվյալ անձը կարող է այդ երկրում ենթարկվել մահապատժի, խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի.

11) քաղաքացուն օտարերկրյա պետության հանձնելը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի.

12) անձին դատապարտելն այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի համարվել.

13) ավելի ծանր պատիժ նշանակելը, քան այն, որը ենթակա էր կիրառման հանցանք կատարելու պահին.

14) անձին նույն արարքի համար կրկին դատելը.

15) անձին ազատությունից զրկելը առանց օրենքով սահմանված հիմքերի, ինչպես նաև այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու քաղաքացիաիրավական պարտավորությունները.

16) պարտադիր կամ հարկադիր աշխատանքը. պարտադիր կամ հարկադիր աշխատանք չի համարվում այն աշխատանքը, որը, օրենքին համապատասխան, կատարում է դատապարտված անձը, զինվորական կամ այլընտրանքային ծառայությունը, ինչպես նաև յուրաքանչյուր աշխատանք, որը պահանջվում է ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ.

17) քաղաքացուն իր քաղաքացիությունը փոխելու իրավունքից զրկելը.

18) շուկայում մենաշնորհի կամ գերշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնությունները.

19) մինչև տասնվեց տարեկան երեխաներին մշտական աշխատանքի ընդունելը.

20) մայրության հետ կապված պատճառներով աշխատանքից ազատելը.

21) որևէ կուսակցության կամ միավորման անդամագրվելուն կամ հավաքին մասնակցելուն հարկադրելը:

Հոդված 24. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները

1. Մարդու հիմնական իրավունքները և ազատությունները ենթակա են սահմանափակման օրենքով՝ համաչափության, որոշակիության, իրավունքների և ազատությունների էության անխախտելիության սկզբունքների պահպանմամբ:

2. Համաչափության սկզբունքի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն

Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար և համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

3. Որոշակիության սկզբունքի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով հստակ, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

4. Իրավունքների և ազատությունների էության անխախտելիության սկզբունքի համաձայն՝ սահմանափակումը չի կարող խախտել Սահմանադրությամբ նախատեսված հիմնական իրավունքների կամ ազատությունների էությունը:

5. Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 5-րդ կետի 1-ին նախադասությամբ, 7-րդ, 9-րդ, 10-րդ կետերով, 11-րդ կետի 2-րդ նախադասությամբ, 17-րդ կետի 2-րդ նախադասությամբ, 25-րդ և 27-րդ կետերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասով, 28-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակության անվտանգության, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 9-րդ, 10-րդ կետերով, 11-րդ կետի 2-րդ նախադասությամբ սահմանված իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել նաև, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում տնտեսական բարեկեցության ապահովման նպատակով: Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի 2-րդ նախադասությամբ սահմանված իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել նաև այլոց պատվի ու բարի համբավի պաշտպանության նպատակով:

6. Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով սահմանված իրավունքը կարող է սահմանափակվել հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

7. Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով սահմանված իրավունքը կարող է սահմանափակվել առողջության և բարոյականության պաշտպանության նպատակով:

8. Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի 2-րդ նախադասությամբ սահմանված իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում հասարակության անվտանգության, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

9. Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված իրավունքները, ինչպես նաև 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 12-րդ, 13-րդ կետերով սահմանված արգելքներով պաշտպանված իրավունքները բացարձակ իրավունքներ են և ենթակա չեն սահմանափակման:

10. Արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները, բացառությամբ բացարձակ իրավունքների, ինչպես նաև Սահմանադրության 19-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերում, 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերում, 4-րդ կետի «ա» ենթակետում, 13-րդ կետում, 14-րդ կետի 1-ին նախադասությունում, 15-րդ կետում, 16-րդ կետի 2-րդ նախադասությունում, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ կետերում, 24-րդ կետի 1-ին նախադասությունում, 32-րդ կետում, 21-րդ հոդվածում, 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 5-րդ, 7-րդ, 11-րդ և 14-րդ կետերում, 25-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերում նշվածների, կարող են, արտակարգ կամ ռազմական դրությամբ պայմանավորված, սահմանափակումների ենթարկվել կամ ժամանակավորապես կասեցվել՝ պահպանելով ստանձնած միջազգային պարտավորությունները:

11. Օրենքով նախատեսված դեպքերում, դատարանի որոշմամբ է թույլատրվում՝

1) բնակարանի խուզարկությունը.

2) հաղորդակցության գաղտնիությունը սահմանափակելը, բացառությամբ երբ դա անհրաժեշտ է պետական անվտանգության պաշտպանության համար և պայմանավորված է հաղորդակցվողների՝ օրենքով սահմանված առանձնահատուկ կարգավիճակով.

3) ծնողական իրավունքներից զրկելը կամ դրանց սահմանափակելը՝ երեխայի լավագույն շահի ապահովման նպատակով.

4) միավորումների գործունեության կասեցումը կամ արգելումը.

5) քաղաքացիությունից զրկելը՝ սահմանադրական կարգի հիմունքների կամ պետության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների համար:

12. Օրենքով սահմանված դեպքերում կուսակցության գործունեությունը կարող է կասեցվել Սահմանադրական դատարանի որոշմամբ: Կուսակցության գործունեությունը ենթակա է արգելման Սահմանադրական դատարանի որոշմամբ, եթե կուսակցությունը քարոզում է սահմանադրական կարգի բռնի տապալում, պետության անկախությունից հրաժարում, ազգային կամ կրոնական ատելություն, բռնություն է կիրառում սահմանադրական կարգը տապալելու նպատակով, կամ դրա գործունեությունն ուղղված է ընտրողի ազատ կամքի արտահայտումը խաթարելուն, կամ ստացել է ֆինանսավորում օտարերկրյա աղբյուրից:

13. Ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև հանցագործության համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունքը կարող է սահմանափակվել նաև օրենքով սահմանված դեպքերում՝ դատական կարգով՝ սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների, ընտրական բնույթի հանցագործությունների համար դատապարտված անձանց նկատմամբ:

14. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի: Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ նախնական և համարժեք փոխհատուցմամբ:

15. Հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ օրենքով սահմանված բացառիկ դեպքերի: Օրենքով կարող է սահմանափակվել օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ուղղակի կամ անուղղակի մասնակցությամբ իրավաբանական անձանց հողի սեփականության իրավունքը:

16. Մինչև տասնութ տարեկան երեխաների աշխատանքի ազատ ընտրության իրավունքը կարող է սահմանափակվել օրենքով՝ կրթության, անվտանգության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման նպատակով:

17. Հանրապետության նախագահը չի կարող լինել կուսակցության անդամ, չի կարող զբաղեցնել որևէ այլ պաշտոն, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

18. Անկախ և ինքնավար մարմնի անդամը, ինքնավար քննչական մարմնի ղեկավարը, անկախ պաշտոնատար անձը, դատավորը, դատախազը չեն կարող լինել կուսակցության անդամ և որևէ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Օրենքով կարող են սահմանվել զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և պետական այլ մարմիններում ծառայող անձի կողմից կուսակցություն ստեղծելու և որևէ կուսակցության անդամագրվելու իրավունքի սահմանափակումներ:

19. Պատգամավորը, Կառավարության անդամը, անկախ և ինքնավար մարմնի անդամը, ինքնավար քննչական մարմնի ղեկավարը, անկախ պաշտոնատար անձը, դատավորը, դատախազը չեն կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, բացառությամբ Սահմանադրության 35-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում,

բացառությամբ Կենտրոնական բանկի նախագահի և խորհրդի մյուս անդամների՝ իրենց կարգավիճակով պայմանավորված պաշտոնների, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Բացառությամբ Հանրապետության նախագահի և պատգամավորի, օրենքով կարող են սահմանվել այլ պաշտոնատար անձանց կամ պետական այլ մարմիններում ծառայող անձանց անհամատեղելիության լրացուցիչ պահանջներ:

20. Օրենքով կարող են սահմանվել դատավորների, դատախազների, ինչպես նաև զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և պետական այլ մարմիններում պաշտոն զբաղեցնող անձի՝ հավաքների ազատության իրավունքի իրականացման սահմանափակումներ:

Հոդված 25. Մարդու և քաղաքացու հիմնական պարտականությունները

1. Յուրաքանչյուր ոք պարտավոր է՝

1) հարգել Սահմանադրությունը և օրենքները, այլոց իրավունքներն ու ազատությունները.

2) վճարել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել օրենքին համապատասխան այլ պարտադիր վճարումները.

3) հոգ տանել իր երեխաների դաստիարակության, կրթության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման մասին.

4) հոգ տանել իր անաշխատունակ ծնողների մասին.

5) հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

2. Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը:

Գլուխ 3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՋԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Հոդված 26. Գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցական համակարգը

1. Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցական համակարգը:

2. Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է կուսակցությունների և օրենքով չարգելված այլ միավորումների կազմավորման և գործունեության ազատությունը:

3. Սույն գլխով նախատեսված իրավունքները և ազատությունները մարդու հիմնական իրավունքներ և ազատություններ են:

Հոդված 27. Կուսակցությունների գործունեությունը

1. Կուսակցությունների համար օրենքով երաշխավորվում են գործունեության հավասար իրավական հնարավորություններ:

2. Կուսակցությունները նպաստում են ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը:

3. Կուսակցությունների կառուցվածքը և գործունեությունը չեն կարող հակասել ժողովրդավարական սկզբունքներին: Կուսակցություններում պետք է գործեն կուսակցական մարմինների ձևավորման ընտրական համակարգեր:

4. Կուսակցությունները գործում են ֆինանսական թափանցիկության սկզբունքով:

5. Կուսակցությունները կարող են ֆինանսավորվել միայն քաղաքացիների կողմից նվիրատվություններ ստանալու միջոցով, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝ պետական բյուջեից:

Հոդված 28. Զանգվածային լրատվության միջոցները

1. Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է զանգվածային լրատվամիջոցների գործունեության ազատությունը:

2. Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային հեռուստատեսության և ռադիոյի գործունեությունը:

3. Զանգվածային լրատվության միջոցները գործում են ֆինանսական թափանցիկության սկզբունքով:

Գլուխ 4. ՕՐԵՆՍԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդված 29. Ազգային ժողովը՝ ժողովրդի բարձրագույն ներկայացուցչական մարմին

1. Ազգային ժողովն իրականացնում է օրենսդիր իշխանությունը:

2. Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ, ընդունում է պետական բյուջեն և իրականացնում է Սահմանադրությամբ սահմանված այլ գործառույթներ:

3. Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով:

Հոդված 30. Ազգային ժողովի կազմավորումը

1. Ազգային ժողովը կազմված է առնվազն հարյուր մեկ պատգամավորից:

2. Ազգային ժողովում Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով տեղեր են հատկացվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին:

3. Ազգային ժողովը կազմավորվում է հերթական և արտահերթ ընտրությունների միջոցով, որոնք նշանակում է Հանրապետության նախագահը:

4. Ազգային ժողովի հերթական ընտրությունն անցկացվում է Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտից ոչ շուտ, քան վաթսուն, և ոչ ուշ, քան հիսուն օր առաջ:

5. Ազգային ժողովի արտահերթ ընտրությունն անցկացվում է Սահմանադրության 32-րդ հոդվածով, 55-րդ հոդվածի 6-րդ մասով, 56-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված դեպքերում Ազգային ժողովի արձակվելուց հետո՝ ոչ շուտ, քան հիսուն, և ոչ ուշ, քան վաթսունհինգ օր հետո:

6. Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ Ազգային ժողովի ընտրություն չի անցկացվում: Այս դեպքում Ազգային ժողովի հերթական ընտրությունն անցկացվում է ռազմական կամ արտակարգ դրության ավարտից ոչ շուտ, քան հիսուն, և ոչ ուշ, քան վաթսունհինգ օր հետո:

7. Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով: Եթե ընտրության արդյունքով կամ երկշաբաթյա ժամկետում քաղաքական կոալիցիա կազմելու միջոցով խորհրդարանական մեծամասնություն չի ձևավորվում, ապա նորընտիր Ազգային ժողով չի կազմավորվում, և անցկացվում են նոր ընտրություններ քաղաքական կոալիցիա կազմելու ժամկետի ավարտից հետո՝ ոչ շուտ, քան երեսուն, և ոչ ուշ, քան քառասունհինգ օր հետո:

8. Եթե նոր ընտրությունների արդյունքով կամ քաղաքական կոալիցիա կազմելու միջոցով կրկին խորհրդարանական մեծամասնություն չի ձևավորվում, ապա, Ընտրական օրենսգրքի համաձայն, երաշխավորվում է կայուն խորհրդարանական մեծամասնություն: Կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորման համար անհրաժեշտ երկրորդ փուլի անցկացման դեպքում թույլատրվում է նոր դաշինքների ձևավորումը: Քաղաքական կոալիցիա կազմելու սահմանափակումները, պայմանները և կարգը սահմանվում են Ընտրական օրենսգրքով:

9. Եթե որևէ կուսակցություն կամ կուսակցությունների դաշինք ընտրության արդյունքներով ստանում է Ազգային ժողովի բաշխված մանդատների ընդհանուր թվի երկու երրորդից ավելին, ապա մյուս կուսակցությունները ստանում են այնքան նվազագույն թվով լրացուցիչ մանդատներ, որի արդյունքում նրանց մանդատների ընդհանուր թիվը կազմի Ազգային ժողովի մանդատների ընդհանուր թվի մեկ երրորդը:

Հոդված 31. Ազգային ժողովի լիազորությունների ժամկետը

1. Ազգային ժողովն ընտրվում է հինգ տարի ժամկետով:

2. Հերթական ընտրության դեպքում նորընտիր Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն սկսվում է նախորդ գումարման Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտման օրը հրավիրված նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման պահին:

3. Եթե մինչև գործող Ազգային ժողովի լիազորությունների ավարտը նորընտիր Ազգային ժողով չի կազմավորվում, ներառյալ եթե ռազմական կամ արտակարգ դրության պատճառով Ազգային ժողովի ընտրությունն անցկացվել է Սահմանադրության 30-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում, ապա գործող Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն ավարտվում, և նորընտիր Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն սկսվում է նորընտիր Ազգային ժողովի կազմավորումից հետո՝ երկրորդ երկուշաբթի օրը հրավիրված նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման պահին:

4. Արտահերթ ընտրության դեպքում գործող Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն ավարտվում, և նորընտիր Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն սկսվում է նորընտիր Ազգային ժողովի կազմավորումից հետո՝ երկրորդ երկուշաբթի օրը հրավիրված Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման պահին:

Հոդված 32. Ազգային ժողովի արձակումը

1. Սահմանադրությամբ նախատեսված դեպքերում Ազգային ժողովի լիազորությունները դադարում են նաև լիազորությունների ժամկետից շուտ արձակվելու դեպքում:

2. Ազգային ժողովի կողմից պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով կարող է Ազգային ժողովը արձակվել:

3. Ազգային ժողովի արձակման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ կարող է ներկայացնել պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը: Եթե Ազգային ժողովի արձակման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը չի ընդունվում, ապա նման նախագիծ կարող է ներկայացվել ոչ շուտ, քան վեց ամիս հետո:

4. Ազգային ժողովի արձակումն արգելվում է ռազմական կամ արտակարգ դրության ընթացքում:

Հոդված 33. Ազգային ժողովի գործունեությունը

1. Ազգային ժողովն իր գործունեությունն իրականացնում է նստաշրջանների և նիստերի միջոցով:

2. Ազգային ժողովի հերթական նստաշրջանները գումարվում են տարեկան երկու անգամ:

3. Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան կամ նիստ գումարում է Ազգային ժողովի նախագահը՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի կամ Կառավարության նախաձեռնությամբ: Արտահերթ նստաշրջանը կամ նիստն անցկացվում է նախաձեռնողի սահմանած օրակարգով և ժամկետում:

4. Ազգային ժողովի նիստն իրավազոր է, եթե նիստի սկզբում գրանցվել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին:

5. Ազգային ժողովի նիստերը հրապարակային են: Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի կամ Կառավարության առաջարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ, անցկացնում է փակ նիստ: Փակ նիստում քվեարկությունն արգելված է:

Հոդված 34. Ազգային ժողովի նախագահը, նրա տեղակալները և Ազգային ժողովի խորհուրդը

1. Ազգային ժողովն իր կազմից ընտրում է Ազգային ժողովի նախագահ և նրա երեք տեղակալ: Տեղակալներից մեկն ընտրվում է ընդդիմադիր խմբակցությունների կազմում ընդգրկված պատգամավորներից: Ազգային ժողովի նախագահը և նրա տեղակալներն ընտրվում և հետո են կանչվում պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

2. Ազգային ժողովի նախագահը ներկայացնում է Ազգային ժողովը և ապահովում նրա բնականոն գործունեությունը:

3. Ազգային ժողովում ձևավորվում է Ազգային ժողովի խորհուրդ, որը կազմված է Ազգային ժողովի նախագահից, նրա տեղակալներից, խմբակցությունների մեկական ներկայացուցիչներից և մշտական հանձնաժողովների նախագահներից: Ազգային ժողովի խորհուրդը հաստատում է հերթական նստաշրջանների և նիստերի օրակարգերի նախագծերը, ինչպես նաև իրականացնում է Ազգային ժողովի կանոնակարգով նախատեսված այլ լիազորություններ:

Հոդված 35. Պատգամավորի կարգավիճակը

1. Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին հինգ տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին հինգ տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:

2. Պատգամավորը ներկայացնում է ամբողջ ժողովրդին, կաշկանդված չէ հրամայական մանդատով, առաջնորդվում է իր խղճով և համոզմունքներով:

3. Պատգամավորի լիազորությունները և գործունեության երաշխիքները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով:

4. Պատգամավորի՝ Կառավարության անդամ կամ Կառավարության անդամի պարտականությունները կատարող անձի պաշտոնում նշանակվելու դեպքում, ինչպես նաև Կառավարության անդամի կամ Կառավարության անդամի պարտականությունները կատարող անձի՝ պատգամավոր ընտրվելու դեպքում պատգամավորի լիազորությունները չեն դադարում, այլ կասեցվում են որպես Կառավարության անդամ կամ Կառավարության անդամի պարտականությունները կատարող անձ պաշտոնավարման ամբողջ ընթացքում:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերում պատգամավորի կարգավիճակի առանձնահատկությունները, լիազորությունների կասեցման և վերսկսման, ինչպես նաև նոր պատգամավորական մանդատի տրամադրման հետ կապված հարցերը կարգավորվում են Ազգային ժողովի կանոնակարգով և Ընտրական օրենսգրքով:

6. Պատգամավորն իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել պատգամավորական գործունեության շրջանակներում հայտնած կարծիքի կամ քվեարկության համար:

7. Պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել Ազգային ժողովի համաձայնությամբ: Պատգամավորն առանց Ազգային ժողովի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանասուներկու ժամից ավելի: Պատգամավորին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Ազգային ժողովի նախագահը:

8. Պատգամավորի լիազորությունները դադարում են Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն ավարտվելու, լիազորությունները կասեցված պատգամավորի լիազորությունների վերսկսման, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելու կամ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու, նրան ազատազրկման դատապարտելու վերաբերյալ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու, նրան անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու, նրա մահվան, հրաժարականի դեպքերում:

9. Պատգամավորի լիազորությունները դադարեցվում են յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ընթացքում քվեարկությունների առնվազն կեսից անհարգելի բացակայելու, ինչպես նաև Սահմանադրության 24-րդ հոդվածի 19-րդ մասի պահանջները խախտելու դեպքերում:

Հոդված 36. Ազգային ժողովի խմբակցությունները

1. Խմբակցությունները նպաստում են Ազգային ժողովի քաղաքական կամքի ձևավորմանը:

2. Խմբակցության մեջ ընդգրկվում են միայն միևնույն կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակով ընտրված պատգամավորները:

Հոդված 37. Ազգային ժողովի հանձնաժողովները

1. Ազգային ժողովում ձևավորվում են մշտական հանձնաժողովներ, ինչպես նաև կարող են ձևավորվել ժամանակավոր և քննիչ հանձնաժողովներ:

2. Մշտական հանձնաժողովները ձևավորվում են Ազգային ժողովի որոշմամբ՝ օրենքների նախագծերի, Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող այլ հարցերի նախնական քննարկման, պատգամավորական էթիկային առնչվող հարցերի քննարկման և դրանց վերաբերյալ եզրակացություններ ներկայացնելու, ինչպես նաև խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու համար: Մշտական հանձնաժողովը հրապարակային նիստում քննարկում է փոխվարչապետների, նախարարների, դիվանագիտական ներկայացուցիչների թեկնածուների նշանակման հարցը և իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունած խորհրդատվական եզրակացությունը ներկայացնում է վարչապետին, բացառությամբ Սահմանադրության 55-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքի:

3. Մշտական հանձնաժողովների առավելագույն թիվը որոշվում է Ազգային ժողովի կանոնակարգով:

4. Ժամանակավոր հանձնաժողովներ կարող են ձևավորվել Ազգային ժողովի որոշմամբ՝ առանձին օրենքների, Ազգային ժողովի որոշումների, հայտարարությունների և ուղերձների նախագծերը քննարկելու և դրանց վերաբերյալ եզրակացություններ ներկայացնելու համար:

5. Քննիչ հանձնաժողով ձևավորվում է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով՝ իրավունքի ուժով, հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերին վերաբերող փաստերը պարզելու և դրանց վերաբերյալ զեկույց ներկայացնելու նպատակով:

6. Հանձնաժողովներում տեղերը բաշխվում են հետևյալ սկզբունքով՝

1) մշտական հանձնաժողովներում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ, իսկ պատգամավորական էթիկային առնչվող հարցերի քննարկման համար ստեղծվող հանձնաժողովում կառավարող խմբակցության (խմբակցությունների) անդամների թիվը և ընդդիմադիր խմբակցությունների կողմից առաջադրվող անդամների հանրագումարային թիվը, բացառությամբ Ազգային ժողովի կանոնակարգով նախատեսված դեպքերի, պետք է լինի հավասար: Մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև բաշխվում են խմբակցությունում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ.

2) քննիչ հանձնաժողովում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ:

7. Քննիչ հանձնաժողովի անդամների նվազագույն թիվը սահմանվում է Ազգային ժողովի կանոնակարգով: Քննիչ հանձնաժողովում նախագահում է պահանջը ներկայացնող պատգամավորներից մեկը:

8. Քննիչ հանձնաժողովի անդամների առնվազն մեկ քառորդի պահանջով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են հանձնաժողովին տրամադրել հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ, եթե դրանց տրամադրումն օրենքով արգելված չէ:

9. Պաշտպանության և անվտանգության բնագավառներում քննիչ հանձնաժողովի լիազորություններն իրականացնում է Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի պահանջով:

10. Քննիչ հանձնաժողովի զեկույցը ներկայացվելուց հետո քննարկվում է Ազգային ժողովի հերթական նիստում: Ազգային ժողովը որոշում է ընդունում համապատասխան զեկույցի ընդունման վերաբերյալ: Ազգային ժողովի կանոնակարգով կարող են նախատեսվել քննիչ հանձնաժողովի զեկույցից բխող միջոցառումների իրականացման վերաբերյալ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից Ազգային ժողով հաշվետվություն ներկայացնելու դեպքերը և կարգը:

Հոդված 38. Օրենսդրական նախաձեռնությունը

1. Օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեն պատգամավորը, Ազգային ժողովի խմբակցությունը, Կառավարությունը:

2. Եթե, Կառավարության եզրակացության համաձայն, օրենքի նախագիծն էականորեն նվազեցնում է պետական բյուջեի եկամուտները կամ ավելացնում պետության ծախսերը, ապա Կառավարության պահանջով այդ օրենքը կարող է ընդունվել պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

3. Կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագիծն ընդունվում կամ մերժվում է երկամսյա ժամկետում:

4. Այն օրենքների նախագծերը, որոնց օրենսդրական նախաձեռնության բացառիկ իրավունքը պատկանում է Կառավարությանը, քվեարկության կարող են դրվել Կառավարության համար ընդունելի ուղղումներով:

5. Ընտրական իրավունք ունեցող առնվազն քառասուն հազար քաղաքացի ունի Ազգային ժողովին քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկելու իրավունք:

Հոդված 39. Օրենքների, Ազգային ժողովի որոշումների, հայտարարությունների և ուղերձների ընդունումը

1. Օրենքները, Ազգային ժողովի որոշումները, հայտարարությունները և ուղերձները, բացառությամբ Սահմանադրությամբ սահմանված դեպքերի, ընդունվում են քվեարկությանը մասնակցող պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին:

2. Ազգային ժողովի կանոնակարգը, Ընտրական օրենսգիրքը, Դատական օրենսգիրքը, «Սահմանադրական դատարանի մասին» օրենքը, «Հանրաքվեի մասին» օրենքը, «Կուսակցությունների մասին» օրենքը, «Մարդու իրավունքների հանձնակատարի մասին» օրենքը, «Ռազմական դրության մասին» օրենքը և «Արտակարգ դրության մասին» օրենքը սահմանադրական օրենքներն են և ընդունվում են պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով: Սահմանադրական օրենքի իրավակարգավորումը չպետք է դուրս գա իր առարկայի շրջանակներից:

3. Սահմանադրությամբ սահմանված դեպքերում, ինչպես նաև իր գործունեության կազմակերպման հարցերով Ազգային ժողովն ընդունում է որոշումներ:

4. Ազգային ժողովի որոշումները, հայտարարությունները և ուղերձներն ստորագրում և հրապարակում է Ազգային ժողովի նախագահը:

Հոդված 40. Պետական բյուջեի ընդունումը և բյուջեի կատարման նկատմամբ հսկողությունը

1. Ազգային ժողովը պետական բյուջեն ընդունում է Կառավարության ներկայացմամբ: Պետական բյուջեն օրենքով սահմանված կարգով ներառում է պետության բոլոր եկամուտները և ծախսերը:

2. Կառավարությունը պետական բյուջեի նախագիծն Ազգային ժողով է ներկայացնում բյուջետային տարին սկսվելուց առնվազն իննսուն օր առաջ:

3. Պետական բյուջեն ընդունվում է մինչև բյուջետային տարին սկսվելը: Այդ ժամկետում պետական բյուջեն չընդունվելու դեպքում, մինչև պետական բյուջեի ընդունումը, ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով:

4. Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ:

5. Ազգային ժողովը, Հաշվեքննիչ պալատի եզրակացության առկայությամբ, քննարկում և որոշում է ընդունում պետական բյուջեի կատարման մասին Կառավարության կողմից ներկայացվող տարեկան հաշվետվության վերաբերյալ:

Հոդված 41. Պատգամավորների բանավոր և գրավոր հարցերը

1. Հերթական նստաշրջանի՝ նիստերի շաբաթվա ընթացքում գումարվող նիստերից մեկում Կառավարության անդամները պատասխանում են պատգամավորների բանավոր հարցերին: Պատգամավորների հարցերի կապակցությամբ Ազգային ժողովը որոշումներ չի ընդունում:

2. Պատգամավորներն ունեն Կառավարության անդամներին գրավոր հարցեր ուղղելու իրավունք: Գրավոր հարցերի պատասխաններն Ազգային ժողովի նիստում չեն ներկայացվում:

Հոդված 42. Հրատապ թեմայով քննարկումները

1. Հերթական նստաշրջանի՝ նիստերի շաբաթվա ընթացքում գումարվող նիստերից մեկում պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով կարող են անցկացվել հասարակական հետաքրքրություն ներկայացնող հրատապ թեմայով քննարկումներ:

Հոդված 43. Վարչապետին անվստահություն հայտնելը

1. Վարչապետին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ կարող է ներկայացնել պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդն այն դեպքում, եթե որոշման նախագծով միաժամանակ առաջարկվում է նոր վարչապետի թեկնածու:

2. Վարչապետին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը քվեարկության է դրվում այն ներկայացվելուց ոչ շուտ, քան քառասունութ, և ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամ հետո: Որոշումն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ անվանական քվեարկությամբ: Որոշման ընդունման դեպքում համարվում է, որ վարչապետը հրաժարական է ներկայացրել: Այս դեպքում Սահմանադրության 55-րդ հոդվածի 5-7-րդ մասերի դրույթները կիրառելի չեն:

3. Վարչապետին անվստահություն կարելի է հայտնել նրա նշանակումից ոչ շուտ, քան մեկ տարի հետո: Եթե վարչապետին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը չի ընդունվում, ապա նման նախագիծ կարող է ներկայացվել ոչ շուտ, քան վեց ամիս հետո:

4. Արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ վարչապետին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ չի կարող ներկայացվել կամ քննարկվել:

Հոդված 44. Փոխվարչապետին, նախարարին և դիվանագիտական ներկայացուցչին անվստահություն հայտնելը

1. Ազգային ժողովի խմբակցությունը կարող է ներկայացնել փոխվարչապետին, նախարարին կամ դիվանագիտական ներկայացուցչին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ հերթական նստաշրջանի ընթացքում ոչ ավելի, քան երկու անգամ:

2. Փոխվարչապետին, նախարարին կամ դիվանագիտական ներկայացուցչին անվստահություն հայտնելու նախագծի վերաբերյալ Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովը կամ հանձնաժողովները ներկայացնում են եզրակացություն: Մշտական հանձնաժողովում այդ հարցի քննությունը իրականացվում է հրապարակային, բացառությամբ Ազգային ժողովի կանոնակարգով սահմանված դեպքերի:

3. Փոխվարչապետին, նախարարին կամ դիվանագիտական ներկայացուցչին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշումն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ անվանական քվեարկությամբ: Որոշման ընդունման դեպքում համապատասխան պաշտոնատար անձի լիազորությունները համարվում են դադարած:

4. Եթե փոխվարչապետին, նախարարին կամ դիվանագիտական ներկայացուցչին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը չի ընդունվում, ապա նույն անձի վերաբերյալ նման նախագիծ կարող է ներկայացվել ոչ շուտ, քան վեց ամիս հետո:

Հոդված 45. Միջազգային պայմանագրեր վավերացնելը, կասեցնելը և չեղյալ հայտարարելը

1. Ազգային ժողովը վավերացնում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում այն միջազգային պայմանագրերը՝

1) որոնք վերաբերում են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին, ինչպես նաև պարտականություններին.

2) որոնք ունեն քաղաքական կամ ռազմական բնույթ.

3) որոնք նախատեսում են Հայաստանի Հանրապետության անդամակցություն միջազգային կազմակերպությանը.

4) որոնք Հայաստանի Հանրապետության համար նախատեսում են ֆինանսական կամ գույքային պարտավորություններ.

5) որոնց կիրառումը նախատեսում է օրենքի փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում, կամ որոնք պարունակում են օրենքին հակասող նորմեր.

6) որոնք ուղղակիորեն նախատեսում են վավերացում.

7) որոնք պարունակում են օրենքի կարգավորմանը ենթակա հարցեր:

2. Ազգային ժողովը, Կառավարության առաջարկությամբ, միջազգային պայմանագրերը վավերացնում, կասեցնում և չեղյալ է հայտարարում օրենքով՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

3. Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել:

Հոդված 46. Համաներումը

1. Ազգային ժողովը, Կառավարության առաջարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ կարող է ընդունել համաներման մասին օրենք:

Հոդված 47. Ռազմական կամ արտակարգ դրությունը

1. Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմի, ինչպես նաև Սահմանադրության 57-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դեպքերում Կառավարությունը հայտարարում է ռազմական դրություն, ուղերձով դիմում է ժողովրդին և կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք:

2. Սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի, բնական կամ հասարակական աղետի անմիջական վտանգի դեպքում Կառավարությունը հայտարարում է արտակարգ դրություն, ձեռնարկում է իրավիճակից բխող միջոցառումներ և այդ մասին ուղերձով դիմում է ժողովրդին:

3. Ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում իրավունքի ուժով անհապաղ գումարվում է Ազգային ժողովի հատուկ նիստ:

4. Ազգային ժողովը կարող է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ վերացնել ռազմական կամ արտակարգ դրությունը կամ չեղյալ հայտարարել ռազմական կամ արտակարգ դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացումը:

Գլուխ 5. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Հոդված 48. Հանրապետության նախագահի պաշտոնը

1. Հանրապետության նախագահը պետության գլուխն է, որը հետևում է Սահմանադրության պահպանմանը, նպաստում է իրավունքի գերակայության և օրինականության ամրապնդմանը, ապահովում է հանրային իշխանության մարմինների գործունեության շարունակականությունը:

2. Հանրապետության նախագահն իր գործառույթներն իրականացնում է Սահմանադրությամբ և օրենքով սահմանված լիազորությունների միջոցով:

3. Հանրապետության նախագահն անձեռնմխելի է և իր լիազորությունների ժամկետում ու դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել իր կարգավիճակից բխող գործողությունների համար, իսկ իր կարգավիճակի հետ չկապված գործողությունների համար կարող է պատասխանատվության ենթարկվել լիազորությունների ավարտից հետո:

4. Հանրապետության նախագահի գործունեությունն ապահովում է իր աշխատակազմը:

Հոդված 49. Հանրապետության նախագահի ընտրությունը

1. Հանրապետության նախագահն ընտրվում է Ազգային ժողովի կողմից՝ յոթ տարի ժամկետով:

2. Հանրապետության նախագահ կարող է ընտրվել երեսունհինգ տարին լրացած, վերջին հինգ տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին հինգ տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք՝ առանց վերընտրվելու իրավունքի:

3. Հանրապետության նախագահի հերթական ընտրությունն անցկացվում է Հանրապետության նախագահի լիազորությունների ավարտից ոչ շուտ, քան քառասուն, և ոչ ուշ, քան երեսուն օր առաջ:

4. Հանրապետության նախագահի թեկնածու առաջադրելու իրավունք ունի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդը:

5. Հանրապետության նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որը ստացել է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք քառորդը: Եթե Հանրապետության նախագահ չի ընտրվում, ապա անցկացվում է ընտրության երկրորդ փուլ, որին կարող են մասնակցել առաջին փուլին մասնակցած բոլոր թեկնածուները: Երկրորդ փուլում Հանրապետության նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որը ստացել է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդը: Եթե Հանրապետության նախագահ չի ընտրվում, ապա անցկացվում է ընտրության երրորդ փուլ, որին կարող են մասնակցել երկրորդ փուլում առավել ձայներ ստացած երկու թեկնածուները, իսկ մեկ թեկնածուի դեպքում՝ միայն այդ թեկնածուն: Երրորդ փուլում Հանրապետության նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որն ստանում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը:

6. Եթե Հանրապետության նախագահ չի ընտրվում, ապա տասնօրյա ժամկետում անցկացվում է Հանրապետության նախագահի նոր ընտրություն:

7. Հանրապետության նախագահի պաշտոնանկության, լիազորությունների կատարման անհնարինության, հրաժարականի կամ մահվան դեպքերում Հանրապետության նախագահի պաշտոնը թափուր մնալուց ոչ շուտ, քան քսանհինգ, և ոչ ուշ, քան երեսունհինգ օր հետո անցկացվում է Հանրապետության նախագահի արտահերթ ընտրություն:

Հոդված 50. Հանրապետության նախագահի պաշտոնի ստանձնումը և լիազորությունների ավարտը

1. Հանրապետության նախագահը պաշտոնը ստանձնում է Հանրապետության նախորդ նախագահի լիազորությունների ավարտման օրը:

2. Արտահերթ ընտրության միջոցով ընտրված Հանրապետության նախագահը պաշտոնը ստանձնում է ընտրվելուց հետո՝ տասներորդ օրը:

3. Հանրապետության նախագահն իր հրաժարականը ներկայացնում է Ազգային ժողով: Հրաժարականը համարվում է ընդունված օրենքով սահմանված կարգով այն հրապարակելու պահից:

4. Հանրապետության նախագահը կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության, այլ ծանր հանցագործության կամ Սահմանադրության կոպիտ խախտման համար:

5. Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին եզրակացություն ստանալու համար Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ դիմում է Սահմանադրական դատարան:

6. Ազգային ժողովը Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու մասին որոշում է կայացնում Սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:

7. Հանրապետության նախագահի ծանր հիվանդության կամ նրա լիազորությունների կատարման համար այլ անհաղթահարելի խոչընդոտների առկայության դեպքերում, որոնք տևականորեն անհնարին են դարձնում նրա լիազորությունների կատարումը, Սահմանադրական դատարանը

Կառավարության դիմումի հիման վրա որոշում է կայացնում Հանրապետության նախագահի լիազորությունների կատարման անհնարինության մասին:

8. Հանրապետության նախագահի պաշտոնանկության, լիազորությունների կատարման անհնարինության, հրաժարականի կամ մահվան դեպքերում մինչև նորընտիր Հանրապետության նախագահի կողմից պաշտոնի ստանձնումը Հանրապետության նախագահի լիազորությունները կատարում է Ազգային ժողովի նախագահը:

Հոդված 51. Հանրապետության նախագահի լիազորությունները

1. Հանրապետության նախագահը՝

1) կարող է ուղերձով դիմել ժողովրդին, հանդես գալ Ազգային ժողովում, նրա հանձնաժողովների նիստերում և ելույթ ունենալ՝ իր նախաձեռնությամբ.

2) ստորագրում և հրապարակում է օրենքները.

3) վարչապետի առաջարկությամբ փոփոխություններ է կատարում Կառավարության կազմում.

4) ընդունում է Կառավարության հրաժարականը.

5) անկախ պետական մարմնի անդամի, Բարձրագույն դատական խորհրդի դատավոր չհանդիսացող անդամի, Դատախազական խորհրդի դատախազ չհանդիսացող անդամի և ինքնավար մարմնի անդամի՝ եռամսյա ժամկետում չընտրվելու դեպքում նշանակում է ժամանակավոր պաշտոնակատար՝ երկու տարի պաշտոնավարման ժամկետով, որը նշված ժամկետը լրանալու դեպքում շարունակում է պաշտոնավարել մինչև Ազգային ժողովի կողմից այդ պաշտոնում նոր անձի ընտրությունը.

6) լուծում է դատապարտյալներին ներում շնորհելու հարցը.

7) հետևում է դատարանների և դատավորների անկախության պահպանմանը, որի նպատակով կարող է հրավիրել Բարձրագույն դատական խորհրդի նիստեր.

8) իրականացնում է Սահմանադրությամբ և օրենքով սահմանված այլ լիազորություններ:

2. Հանրապետության նախագահն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝

1) Կառավարության առաջարկությամբ կնքում է միջազգային պայմանագրեր, հաստատում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում վավերացում չպահանջող միջազգային պայմանագրերը.

2) վարչապետի առաջարկությամբ նշանակում և հետ է կանչում օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում դիվանագիտական ներկայացուցիչներին, շնորհում է բարձրագույն դիվանագիտական աստիճաններ.

3) ընդունում է օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների դիվանագիտական ներկայացուցիչների հավատարմագրերը և հետկանչագրերը.

4) վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում է զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը և շնորհում է բարձրագույն զինվորական կոչումներ.

5) լուծում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հարցերը.

6) պարգևատրում է Հայաստանի Հանրապետության շքանշաններով և մեդալներով, շնորհում է բարձրագույն դասային աստիճաններ:

3. Իր լիազորություններն իրականացնելիս Հանրապետության նախագահն ընդունում է հրամանագրեր և կարգադրություններ:

Հոդված 52. Հանրապետության նախագահի վետոյի իրավունքը

1. Հանրապետության նախագահը Սահմանադրության 51-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 6-րդ կետերով, 51-րդ հոդվածի 2-րդ մասով, 57-րդ հոդվածի 4-րդ մասով, 61-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով, 65-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, 66-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված դեպքերում կարող է համապատասխան ակտը եռօրյա ժամկետում իր

առարկություններով վերադարձնել առաջարկություն ներկայացնող կամ միջնորդությամբ դիմող մարմին: Եթե իրավասու մարմինը չի ընդունում այդ առարկությունը, ապա Հանրապետության նախագահը ստորագրում է համապատասխան ակտը կամ դիմում է Սահմանադրական դատարան: Եթե Հանրապետության նախագահը չի կատարում սույն պահանջները, ապա համապատասխան ակտն ուժի մեջ է մտնում իրավունքի ուժով:

2. Հանրապետության նախագահը օրենքը քսանմեկօրյա ժամկետում չստորագրելու և չհրապարակելու դեպքում նույն ժամկետում դիմում է Սահմանադրական դատարան՝ Սահմանադրությանն օրենքի համապատասխանությունը որոշելու հարցով: Եթե Սահմանադրական դատարանը որոշում է, որ օրենքը համապատասխանում է Սահմանադրությանը, ապա Հանրապետության նախագահը հնգօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է օրենքը: Եթե Հանրապետության նախագահը չի կատարում սույն մասով սահմանված պահանջները, ապա Ազգային ժողովի նախագահը հնգօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է օրենքը:

Գլուխ 6. ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդված 53. Գործադիր իշխանության համակարգի մարմինները

1. Կառավարությունը գործադիր իշխանության բարձրագույն մարմինն է, որն իրականացնում է պետության ներքին և արտաքին քաղաքականությունը, գործադիր իշխանության մարմինների ընդհանուր ղեկավարումը, ֆինանսատնտեսական, վարկային և հարկային միասնական պետական քաղաքականությունը, կառավարում է պետական սեփականությունը:

2. Կառավարության իրավասությանն են ենթակա գործադիր իշխանությանը վերաբերող բոլոր այն հարցերը, որոնք վերապահված չեն գործադիր իշխանության համակարգի այլ մարմինների կամ տեղական ինքնակառավարման մարմիններին:

3. Կառավարության լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով:

4. Գործադիր իշխանության համակարգի մարմիններն են նախարարությունները, Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա մարմինները և տարածքային կառավարման մարմինները:

Հոդված 54. Կառավարության անդամները

1. Կառավարության անդամներն են վարչապետը, փոխվարչապետները և նախարարները:

2. Վարչապետը Կառավարության ծրագրի շրջանակներում որոշում է Կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունները, ղեկավարում է Կառավարության գործունեությունը և համակարգում է Կառավարության անդամների աշխատանքը: Վարչապետը կարող է Կառավարության անդամներին կոնկրետ հարցերով հանձնարարականներ տալ:

3. Վարչապետը հրավիրում և վարում է Կառավարության նիստերը, ստորագրում է Կառավարության որոշումները: Կառավարության նիստերը հրապարակային են, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

4. Փոխվարչապետները վարչապետի հանձնարարությամբ իրականացնում են Կառավարության գործունեության առանձին ոլորտների համակարգումը: Փոխվարչապետներից մեկը վարչապետի սահմանած կարգով փոխարինում է վարչապետին նրա բացակայության ժամանակ:

5. Յուրաքանչյուր նախարար ինքնուրույն ղեկավարում է նախարարությանը վերապահված գործունեության ոլորտը:

6. Կառավարության անդամը պետք է բավարարի պատգամավորին ներկայացվող պահանջները:

7. Նախարարությունների ցանկը, փոխվարչապետների և նախարարների թիվը, ինչպես նաև Կառավարության գործունեության կարգը Կառավարության ներկայացմամբ սահմանվում են օրենքով:

Հոդված 55. Կառավարության կազմավորումը և հրաժարականը

1. Հանրապետության նախագահը նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման օրը անհապաղ վարչապետ է նշանակում խորհրդարանական մեծամասնության ներկայացրած թեկնածուին, որը պետք է հանդիսանա խորհրդարանական մեծամասնություն ձևավորած խմբակցության պատգամավոր կամ Սահմանադրության 35-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված անձ:

2. Իր նշանակումից հետո վարչապետը քսանօրյա ժամկետում Հանրապետության նախագահին առաջարկում է փոխվարչապետների և նախարարների թեկնածուներին: Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում կամ նշանակում է փոխվարչապետներին և նախարարներին, կամ դիմում է Սահմանադրական դատարան: Սահմանադրական դատարանը դիմումը քննում և որոշում է կայացնում հնգօրյա ժամկետում: Եթե Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում չի կատարում սույն հոդվածով սահմանված պահանջները, ապա համապատասխան փոխվարչապետը կամ նախարարը նշանակված է համարվում իրավունքի ուժով:

3. Կառավարությունը համարվում է կազմավորված, եթե նշանակվել են Կառավարության անդամների երկու երրորդը:

4. Վարչապետի հրաժարականի կամ վարչապետի պաշտոնը թափուր մնալու այլ դեպքերում վարչապետի թեկնածու կարող է առաջադրվել պատգամավորը կամ Սահմանադրության 35-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված անձը:

5. Վարչապետի հրաժարական ներկայացնելու կամ վարչապետի պաշտոնը թափուր մնալու այլ դեպքերում Կառավարության հրաժարականն ընդունվելուց հետո՝ յոթնօրյա ժամկետում, Ազգային ժողովի խմբակցություններն իրավունք ունեն առաջադրելու վարչապետի թեկնածուներ: Ազգային ժողովը վարչապետին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

6. Վարչապետ չընտրվելու դեպքում քվեարկությունից յոթ օր հետո անցկացվում է վարչապետի նոր ընտրություն, որին մասնակցելու իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի առաջադրած վարչապետի թեկնածուները: Եթե պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ վարչապետ չի ընտրվում, ապա Ազգային ժողովն արձակվում է իրավունքի ուժով:

7. Վարչապետի ընտրությունն անցկացվում է անվանական քվեարկությամբ:

8. Հանրապետության նախագահն անհապաղ վարչապետ է նշանակում Ազգային ժողովի կողմից ընտրված թեկնածուին:

9. Կառավարությունը Հանրապետության նախագահին ներկայացնում է իր հրաժարականը նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանի, Ազգային ժողովի արձակման, Կառավարության ծրագրին հավանություն չտալու, վարչապետի կողմից հրաժարական ներկայացվելու կամ վարչապետի պաշտոնը թափուր մնալու օրը: Կառավարության անդամները շարունակում են իրենց պարտականությունների կատարումը մինչև նոր Կառավարության կազմավորումը:

Հոդված 56. Կառավարության ծրագիրը

1. Կառավարության կազմավորումից հետո՝ քսանօրյա ժամկետում, վարչապետն Ազգային ժողով է ներկայացնում Կառավարության ծրագիրը:

2. Ազգային ժողովը Կառավարության ծրագրին հավանություն է տալիս յոթնօրյա ժամկետում՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

3. Եթե Ազգային ժողովը հավանություն չի տալիս Կառավարության ծրագրին և Սահմանադրության 55-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերին համապատասխան չի ընտրում նոր վարչապետ, ապա Ազգային ժողովն արձակվում է իրավունքի ուժով: Եթե Ազգային ժողովն ընտրում է վարչապետին, սակայն կրկին հավանություն չի տալիս Կառավարության ծրագրին, ապա Ազգային ժողովն արձակվում է իրավունքի ուժով:

4. Սույն հոդվածի 3-րդ մասը չի տարածվում Սահմանադրության 43-րդ հոդվածին համապատասխան կազմավորված Կառավարության ծրագրի վրա: Եթե այդ Կառավարության ծրագիրը հավանության չի արժանանում, ապա Ազգային ժողովն արձակվում է իրավունքի ուժով:

5. Յուրաքանչյուր տարվա համար Կառավարությունը զեկույց է ներկայացնում Ազգային ժողով իր ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին:

Հոդված 57. Զինված ուժերի ղեկավարումը և կիրառումը

1. Զինված ուժերը Կառավարության ենթակայության ներքո են՝ Ազգային ժողովի վերահսկողությամբ:

2. Զինված ուժերի գերագույն հրամանատարը վարչապետն է:

3. Զինված ուժերի ղեկավարումն իրականացնում է պաշտպանության նախարարը:

4. Զինված ուժերի զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձը գլխավոր շտաբի պետն է, որին վարչապետի առաջարկությամբ նշանակում է Հանրապետության նախագահը: Գլխավոր շտաբի պետը ենթակա է պաշտպանության նախարարին:

5. Ռազմական դրության կամ արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված միջոցառումների իրականացման, ինչպես նաև մարդասիրական կամ բնապահպանական օգնության, զորավարժությունների կամ խաղաղության դիտորդական առաքելությունների նպատակով զինված ուժերը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ուղարկելու անհրաժեշտության դեպքում Կառավարությունը որոշում է ընդունում զինված ուժերի կիրառման մասին:

6. Կառավարությունը զինված ուժերը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ուղարկելու մասին որոշում է կայացնում Ազգային ժողովի համաձայնությամբ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված դեպքերի:

7. Անհետաձգելի անհրաժեշտության դեպքում զինված ուժերի կիրառման մասին որոշումը կայացնում է վարչապետը, բացառությամբ զինված ուժերը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ուղարկելու դեպքերի: Զինված ուժերի կիրառման մասին որոշման վերաբերյալ վարչապետը անհապաղ տեղեկացնում է Կառավարության անդամներին, և Կառավարությունը կարող է վերացնել այդ որոշումը կամ չեղյալ հայտարարել այդ որոշմամբ նախատեսված միջոցառումների իրականացումը: Եթե Կառավարությունը որոշում չի կայացնում զինված ուժերի կիրառման մասին վարչապետի որոշումը վերացնելու կամ այդ որոշմամբ նախատեսած միջոցառումների իրականացումը չեղյալ հայտարարելու մասին, ապա հայտարարում է ռազմական կամ արտակարգ դրություն, որից հետո գործում են Սահմանադրության 47-րդ հոդվածով սահմանված կարգավորումները:

Գլուխ 7. ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդված 58. Բարձրագույն դատական խորհուրդը

1. Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը և գործունեության արդյունավետությունը:

2. Բարձրագույն դատական խորհուրդն իր լիազորությունների իրականացմամբ նպաստում է դատական իշխանության նկատմամբ հանրային վստահության պահպանմանն ու ամրապնդմանը:

3. Բարձրագույն դատական խորհուրդը հետևում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք ձեռնպահ մնան ցանկացած գործողությունից կամ հայտարարությունից, որը կարող է խաթարել դատարանների անկախությունը կամ հանրային վստահությունը դատական իշխանության նկատմամբ:

4. Բարձրագույն դատական խորհուրդը կազմված է տասն անդամից, որոնցից հինգը դատավոր անդամներ են, մյուս հինգը՝ դատավոր չհանդիսացող անդամներ: Խորհրդի անդամներին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն երեք հինգերորդով: Դատավոր անդամներն ընտրվում են առնվազն տասը տարվա իրավաբանի մասնագիտական փորձառություն ունեցող դատավորների կազմից՝ Դատավորների ընդհանուր ժողովի ներկայացմամբ: Դատավոր չհանդիսացող անդամներն ընտրվում են միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասը տարվա փորձառությամբ իրավաբան գիտնականներից կամ այլ հեղինակավոր իրավաբաններից: Դատավոր չհանդիսացող անդամներից մեկն ընտրվում է ընդդիմադիր խմբակցությունների առաջադրմամբ:

5. Բարձրագույն դատական խորհրդի անդամներն ընտրվում են յոթ տարի ժամկետով՝ առանց վերընտրվելու իրավունքի:

6. Դատավոր չհանդիսացող անդամն իր պաշտոնավարման ընթացքում չի կարող ընդգրկվել դատավորների թեկնածուների ցուցակում կամ նշանակվել դատավոր, իսկ դատավոր անդամը չի կարող ընդգրկվել դատավորների առաջխաղացման ցուցակում, նշանակվել Վճռաբեկ դատարանի դատավոր, ինչպես նաև լինել դատարանի նախագահ կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ:

7. Բարձրագույն դատական խորհուրդն իր կազմից Դատական օրենսգրքով սահմանված կարգով ընտրում է խորհրդի նախագահ՝ երեք տարի ժամկետով, առանց վերընտրվելու իրավունքի՝ հաջորդաբար դատավոր անդամներից և դատավոր չհանդիսացող անդամներից:

8. Բարձրագույն դատական խորհուրդը՝

1) կազմում և հաստատում է դատավորների թեկնածուների, ներառյալ առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակները.

2) Հանրապետության նախագահին առաջարկում է նշանակման ենթակա, ներառյալ առաջխաղացման կարգով նշանակման ենթակա դատավորների, ինչպես նաև դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների թեկնածուներին.

3) Ազգային ժողովին առաջարկում է Վճռաբեկ դատարանի դատավորների և նախագահի թեկնածուներին.

4) լուծում է դատավորներին մեկ այլ դատարան գործուղելու հարցը.

5) լուծում է իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցը.

6) լուծում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը.

7) դատավորների լիազորությունների դադարեցման առաջարկությամբ դիմում է Հանրապետության նախագահին.

8) հաստատում է իր, ինչպես նաև դատարանների ծախսերի նախահաշիվները և ներկայացնում Կառավարություն՝ օրենքով սահմանված կարգով պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար.

9) օրենքին համապատասխան՝ ձևավորում է իր աշխատակազմը.

10) ապահովում է Դատական օրենսգրքով նախատեսված՝ դատարանների և դատավորների անկախությանը և գործունեության արդյունավետությանն աջակցող հանձնաժողովների աշխատանքը.

11) իրականացնում է Դատական օրենսգրքով սահմանված այլ լիազորություններ:

9. Բարձրագույն դատական խորհուրդը տարեկան հաղորդում է ներկայացնում Ազգային ժողով իր գործունեության վերաբերյալ:

Հոդված 59. Արդարադատության իրականացման կառուցակարգերը

1. Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

2. Արտակարգ դատարանների ստեղծումն արգելվում է:

3. Օրենքով նախատեսված դեպքերում և կարգով դատավարությունն իրականացվում է երդվյալների մասնակցությամբ:

4. Օրենքով կարող են նախատեսվել նաև անկախության և անաչառության չափանիշները բավարարող վեճի լուծման այլընտրանքային կառուցակարգեր:

5. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարց քննարկելու, ինչպես նաև Դատական օրենսգրքով սահմանված այլ դեպքերում Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան:

Հոդված 60. Դատարանների և դատավորների անկախությունը

1. Արդարադատություն իրականացնելիս դատարաններն ու դատավորներն անկախ են, անաչառ և գործում են միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Արդարադատություն իրականացնելիս Սահմանադրական դատարանն անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը: Արդարադատության իրականացմանը որևէ միջամտություն արգելվում է:

2. Դատավորը չի կարող պատասխանատվության ենթարկվել արդարադատություն իրականացնելիս հայտնած կարծիքի կամ կայացրած դատական ակտի համար, բացառությամբ երբ առկա են հանցագործության կամ կարգապահական խախտման հատկանիշներ:

3. Իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել Սահմանադրական դատարանի համաձայնությամբ: Սահմանադրական դատարանի դատավորն իր լիազորությունների իրականացման կապակցությամբ առանց Սահմանադրական դատարանի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանասուներկու ժամից ավելի: Սահմանադրական դատարանի դատավորին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Սահմանադրական դատարանի նախագահը:

4. Իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել Բարձրագույն դատական խորհրդի համաձայնությամբ: Դատավորն իր լիազորությունների իրականացման կապակցությամբ առանց Բարձրագույն դատական խորհրդի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանասուներկու ժամից ավելի: Դատավորին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Բարձրագույն դատական խորհրդի նախագահը:

5. Դատավորի համար սահմանվում է նրա բարձր կարգավիճակին և պատասխանատվությանը համապատասխանող վարձատրություն, որի չափը սահմանվում է օրենքով:

Հոդված 61. Դատավորի պաշտոնավարման ավարտը

1. Դատավորները պաշտոնավարում են մինչև կենսաթոշակային տարիքը լրանալը: Դատավորների կենսաթոշակային տարիքը սահմանվում է «Սահմանադրական դատարանի մասին» օրենքով և Դատական օրենսգրքով:

2. Դատավորի լիազորությունները դադարում են լիազորությունների ժամկետն ավարտվելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելու կամ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու, նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու կամ քրեական հետապնդումը ոչ ռեաբիլիտացնող հիմքով դադարեցնելու, նրան անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու, նրա հրաժարականի, մահվան դեպքերում:

3. Դատավորի լիազորությունները դադարեցվում են անհամատեղելիության պահանջները խախտելու, քաղաքական գործունեությամբ զբաղվելու, առողջական վիճակի պատճառով պաշտոնավարման անհնարինության, էական կարգապահական խախտում կատարելու, բարեվարքության պահանջների էական խախտում կատարելու դեպքերում: Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարեցվում են Սահմանադրական դատարանի որոշմամբ, իսկ դատավորի լիազորությունները՝ Հանրապետության նախագահի հրամանագրով՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ:

4. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և կարգը սահմանվում են «Սահմանադրական դատարանի մասին» օրենքով և Դատական օրենսգրքով:

Հոդված 62. Դատարանների համակարգը

1. Հայաստանի Հանրապետությունում գործում են Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները և առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները: Օրենքով կարող են ստեղծվել մասնագիտացված դատարաններ:

Հոդված 63. Սահմանադրական դատարանը

1. Սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը՝ ապահովելով Սահմանադրության գերակայությունը: Սահմանադրական դատարանը գործը քննում է համապատասխան դիմումի առկայության դեպքում:

2. Սահմանադրական դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ, իսկ կազմավորման և գործունեության կարգը՝ Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» օրենքով:

3. Սահմանադրական դատարանը՝

1) որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը. սույն կետով Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունի՝
ա. յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, որը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ և 3-րդ գլուխներում ամրագրված իր իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը,
բ. պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը,
գ. Կառավարությունը,
դ. Բարձրագույն դատական խորհուրդը՝ դատարանների և դատավորների անկախությունը խաթարող նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության հարցերով,
ե. դատարանները՝ իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով, եթե հիմնավոր կասկածներ ունեն դրա սահմանադրականության վերաբերյալ և գտնում են, որ տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով,
զ. տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց սահմանադրական իրավունքները խախտող նորմատիվ իրավական ակտերի մասով,
է. գլխավոր դատախազը՝ դատախազության կողմից իրականացվող կոնկրետ վարույթին առնչվող նորմատիվ իրավական ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով,
ը. Մարդու իրավունքների հանձնակատարը՝ նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրության 2-րդ և 3-րդ գլուխների դրույթներին համապատասխանության հարցերով.
2) մինչև Սահմանադրության փոփոխությունների նախագծի ընդունումը որոշում է դրա համապատասխանությունը Սահմանադրության անփոփոխելի հոդվածներին, ինչպես նաև մինչև հանրաքվեի դրվող իրավական ակտերի նախագծերի ընդունումը որոշում է դրանց համապատասխանությունը Սահմանադրությանը. սույն կետով Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունի Ազգային ժողովը՝ Սահմանադրության փոփոխությանը, վերպետական միջազգային կազմակերպություններին անդամակցությանը կամ տարածքի փոփոխությանը վերաբերող հարցերով, իսկ քաղաքացիական նախաձեռնության կարգով հանրաքվեի դրվող օրենքի նախագծի հարցով՝ քաղաքացիական նախաձեռնության լիազոր ներկայացուցիչը.

3) մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը. սույն կետով Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունի Կառավարությունը.

4) լուծում է սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերը. սույն կետով Սահմանադրական դատարան դիմելու իրավունք

ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը, Կառավարությունը, Բարձրագույն դատական խորհուրդը, տեղական ինքնակառավարման մարմինները.

5) լուծում է հանրաքվեի, Ազգային ժողովի և Հանրապետության նախագահի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը. սույն կետով Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունի՝

ա. Ազգային ժողովի ընտրությանը մասնակցած կուսակցությունը կամ կուսակցությունների դաշինքը՝ Ազգային ժողովի ընտրության արդյունքով ընդունված որոշումների հետ կապված վեճերով,
բ. Ազգային ժողովի խմբակցությունը՝ հանրաքվեի և Հանրապետության նախագահի ընտրության արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով.

6) որոշում է կայացնում պատգամավորի լիազորությունները դադարեցնելու հարցի վերաբերյալ. սույն կետով Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը, Ազգային ժողովի խորհուրդը.

7) եզրակացություն է տալիս Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին. սույն կետով Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունի Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ.

8) որոշում է կայացնում Հանրապետության նախագահի լիազորությունների կատարման անհնարինության մասին. սույն կետով Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունի Կառավարությունը.

9) լուծում է Սահմանադրական դատարանի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը. սույն կետով Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեն Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով ընդունված որոշմամբ, Սահմանադրական դատարանի առնվազն երեք դատավոր.

10) լուծում է Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարեցնելու հարցը. սույն կետով Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունի Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով ընդունված որոշմամբ.

11) լուծում է իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցը. սույն կետով Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունի գլխավոր դատախազը.

12) օրենքով սահմանված դեպքերում որոշում է կայացնում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու վերաբերյալ. սույն կետով Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեն Ազգային ժողովը, Կառավարությունը.

13) որոշում է վերպետական միջազգային կազմակերպության մարմինների նորմատիվ իրավական ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը. սույն կետով Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունի Կառավարությունը.

14) որոշում է կայացնում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և դատավորի լիազորությունները դադարեցնելու հարցերով որոշումների կամ դատավորի լիազորությունները իրավունքի ուժով դադարեցվելու դեմ բերված բողոքների վերաբերյալ. սույն կետով Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունի համապատասխան դատավորը կամ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմինը:

4. Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունի նաև Հանրապետության նախագահը՝ Սահմանադրության 52-րդ հոդվածով, 55-րդ հոդվածի 2-րդ մասով, ինչպես նաև սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով սահմանված դեպքերում:

5. Սահմանադրական դատարանը կազմված է ինը դատավորից, որոնցից երեքն ընտրվում են Հանրապետության նախագահի, երեքը՝ Կառավարության, երեքը՝ Դատավորների ընդհանուր ժողովի առաջարկությամբ: Դատավորների ընդհանուր ժողովը կարող է առաջարկել դատավորներ: Սահմանադրական դատարանի դատավորներին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների

ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, տասներկու տարի ժամկետով՝ առանց վերընտրվելու իրավունքի: Եթե Սահմանադրական դատարանի դատավոր չի ընտրվում, ապա անցկացվում է ընտրության երկրորդ փուլ, որի դեպքում Սահմանադրական դատարանի դատավորն ընտրվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

6. Սահմանադրական դատարանի դատավոր կարող է ընտրվել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, հայերենին տիրապետող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասը տարվա փորձառությամբ, բարձրագույն կրթությամբ իրավաբանը: Սահմանադրական դատարանի դատավորների համար «Սահմանադրական դատարանի մասին» օրենքով կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ:

7. Սահմանադրական դատարանն իր կազմից՝ յոթ տարի ժամկետով, ընտրում է Սահմանադրական դատարանի նախագահ՝ առանց վերընտրվելու իրավունքի:

8. Սահմանադրական դատարանը սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հարցերի վերաբերյալ, բացառությամբ 7-րդ կետով նախատեսված հարցի, ընդունում է որոշումներ, իսկ 7-րդ կետով նախատեսված հարցով՝ եզրակացություն: Սույն հոդվածի 3-րդ մասի 10-րդ և 12-րդ կետերով նախատեսված հարցերով որոշումները, ինչպես նաև 7-րդ կետով նախատեսված հարցով եզրակացությունն ընդունվում են Սահմանադրական դատարանի դատավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով, մյուս որոշումները՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

9. Սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացությունները վերջնական են և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:

10. Սահմանադրական դատարանն իր որոշմամբ կարող է սահմանել Սահմանադրությանը չհամապատասխանող նորմատիվ իրավական ակտի կամ դրա մի մասի իրավական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ:

11. Եթե Սահմանադրական դատարանի եզրակացությունը բացասական է, ապա հարցը դուրս է գալիս իրավասու մարմնի քննությունից:

Հոդված 64. Վճռաբեկ դատարանը

1. Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն դատական ատյանը, բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի, Վճռաբեկ դատարանն է:

2. Վճռաբեկ դատարանը՝

1) ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը՝ դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու կամ օրենքով սահմանված դեպքերում և կարգով դատարանների կողմից նյութական կամ դատավարական օրենսդրության կիրառման վերաբերյալ խորհրդատվական բնույթի պարզաբանումներ տրամադրելու միջոցով.

2) վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

3. Վճռաբեկ դատարանի դատավոր կարող է նշանակվել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, հայերենին տիրապետող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասը տարվա փորձառությամբ, բարձրագույն կրթությամբ իրավաբանը: Վճռաբեկ դատարանի դատավորների համար Դատական օրենսգրքով կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ:

4. Վճռաբեկ դատարանի նախագահին ընտրում է Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ, Վճռաբեկ դատարանի կազմից, յոթ տարի ժամկետով՝ առանց վերընտրվելու իրավունքի:

5. Վճռաբեկ դատարանի պալատների նախագահներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ, համապատասխան պալատի կազմից, յոթ տարի ժամկետով՝ առանց վերընտրվելու իրավունքի:

6. Վճռաբեկ դատարանի դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Ազգային ժողովի առաջարկությամբ: Ազգային ժողովը թեկնածուին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ:

Հոդված 65. Վերաքննիչ դատարանները

1. Վերաքննիչ դատարաններն առաջին ատյանի դատարանների դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայող դատական ատյան են: Առաջին ատյանի դատարանների դատական ակտերի վերանայումից բացի, օրենքով կարող են նախատեսվել վերաքննիչ դատարանների կողմից արդարադատության իրականացման այլ դեպքեր:

2. Վերաքննիչ դատարանների դատավոր կարող է նշանակվել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, հայերենին տիրապետող, ընտրական իրավունք ունեցող, բարձրագույն կրթությամբ իրավաբանը: Վերաքննիչ դատարանների դատավորների համար Դատական օրենսգրքով կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ:

3. Վերաքննիչ դատարանների նախագահներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ, համապատասխան դատարանի կազմից, հինգ տարի ժամկետով: Դատարանի նախագահն իր պաշտոնավարման ժամկետի ավարտից հետո՝ երեք տարվա ընթացքում, չի կարող վերստին նշանակվել այդ պաշտոնում:

4. Վերաքննիչ դատարանների դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ:

Հոդված 66. Առաջին ատյանի դատարանները

1. Առաջին ատյանի դատավոր կարող է նշանակվել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, հայերենին տիրապետող, ընտրական իրավունք ունեցող, բարձրագույն կրթությամբ իրավաբանը: Առաջին ատյանի դատարանների դատավորների համար Դատական օրենսգրքով կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ:

2. Առաջին ատյանի դատարանների նախագահներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ, համապատասխան դատարանի կազմից, հինգ տարի ժամկետով: Դատարանի նախագահն իր պաշտոնավարման ժամկետի ավարտից հետո՝ երեք տարվա ընթացքում, չի կարող վերստին նշանակվել այդ պաշտոնում:

3. Առաջին ատյանի դատարանների դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ:

Գլուխ 8. ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Հոդված 67. Դատախազական խորհուրդը

1. Դատախազական խորհուրդը անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատախազների և դատախազական համակարգի անկախությունը և գործունեության արդյունավետությունը:

2. Դատախազական խորհուրդը՝

1) կազմում, հաստատում և գլխավոր դատախազին է ներկայացնում դատախազների թեկնածուների, ներառյալ առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակները.

2) լուծում է դատախազներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը.

3) օրենքով սահմանված դեպքերում Ազգային ժողով է ներկայացնում գլխավոր դատախազին պաշտոնանկ անելու միջնորդություն.

4) օրենքով սահմանված դեպքերում Ազգային ժողովի կողմից գլխավոր դատախազին պաշտոնանկ անելու գործընթաց սկսելու դեպքում Ազգային ժողովին ներկայացնում է դրա հիմքերի վերաբերյալ եզրակացություն.

5) հարուցում է քրեական հետապնդում գլխավոր դատախազի նկատմամբ.

6) հաստատում է իր, ինչպես նաև դատախազության ծախսերի նախահաշիվները և ներկայացնում Կառավարություն՝ օրենքով սահմանված կարգով պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար.

7) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

3. Դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումը ենթակա է վերանայման դատական կարգով:

4. Դատախազական խորհուրդը կազմված է տասը անդամից, որոնցից հինգը դատախազ անդամներ են, հինգը՝ դատախազ չհանդիսացող անդամներ: Խորհրդի անդամներին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն երեք հինգերորդով: Դատախազ անդամներն ընտրվում են առնվազն տասը տարվա իրավաբանի մասնագիտական փորձառություն ունեցող դատախազների կազմից, դատախազների ընդհանուր ժողովի ներկայացմամբ: Դատախազ չհանդիսացող անդամներն ընտրվում են միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասը տարվա փորձառությամբ իրավաբան գիտնականներից կամ այլ հեղինակավոր իրավաբաններից: Դատախազ չհանդիսացող անդամներից մեկն ընտրվում է ընդդիմադիր խմբակցությունների առաջադրմամբ: Դատախազական խորհրդի անդամ չեն կարող ընտրվել գլխավոր դատախազը և նրա տեղակալները:

5. Դատախազական խորհրդի անդամներն ընտրվում են յոթ տարի ժամկետով՝ առանց վերընտրվելու իրավունքի:

6. Դատախազական խորհուրդը օրենքով սահմանված ժամկետով ղեկավարում է հաջորդաբար դատախազներից և դատախազ չհանդիսացող անդամներից մեկը:

7. Դատախազական խորհուրդը տարեկան հաղորդում է ներկայացնում Ազգային ժողով իր գործունեության վերաբերյալ:

Հոդված 68. Դատախազությունը

1. Դատախազությունը միասնական անկախ համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը:

2. Դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝

1) հարուցում է քրեական հետապնդում.

2) հսկողություն է իրականացնում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ.

3) դատարանում պաշտպանում է մեղադրանքը.

4) բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները.

5) հանրային շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան:

3. Գլխավոր դատախազը Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրվում է Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, յոթ տարի ժամկետով՝ առանց վերընտրվելու իրավունքի: Եթե գլխավոր դատախազ չի ընտրվում, ապա անցկացվում է ընտրության երկրորդ փուլ, որի դեպքում գլխավոր դատախազն ընտրվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

4. Գլխավոր դատախազ կարող է ընտրվել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասը տարվա փորձառությամբ, բարձրագույն կրթությամբ իրավաբանը: Գլխավոր դատախազի համար օրենքով կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ:

5. Օրենքով սահմանված դեպքերում Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով կարող է պաշտոնանկ անել գլխավոր դատախազին:

6. Գլխավոր դատախազը տարեկան հաղորդում է ներկայացնում Ազգային ժողով դատախազության գործունեության վերաբերյալ:

Հոդված 69. Քննչական մարմինները

1. Քննչական մարմիններն օրենքով սահմանված դեպքերում և կարգով կազմակերպում և իրականացնում են մինչդատական քրեական վարույթը:

2. Քննչական մարմինները կարող են ստեղծվել նաև որպես ինքնավար մարմիններ: Կոռուպցիոն բնույթի հանցագործություններով, ինչպես նաև պաշտոնատար անձի՝ իր լիազորությունների իրականացման կապակցությամբ կատարած հանցագործություններով մինչդատական քրեական վարույթն իրականացնում է ինքնավար քննչական մարմինը:

Գլուխ 9. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հոդված 70. Համայնքը և տեղական ինքնակառավարումը

1. Համայնքը մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակիչների հանրություն է:

2. Համայնքն ունի հողի, ինչպես նաև այլ գույքի նկատմամբ սեփականության իրավունք: Համայնքի տարածքում գտնվող հողը, բացառությամբ պետությանը, ինչպես նաև ֆիզիկական ու իրավաբանական անձանց պատկանող հողերի, համայնքի սեփականությունն է:

3. Համայնքն ունի բյուջե, որի եկամուտների ձևավորման և ծախսերի իրականացման կարգը սահմանվում է օրենքով:

4. Համայնքի պարտադիր խնդիրները սահմանվում են օրենքով, իսկ կամավոր խնդիրները՝ համայնքի ավագանու որոշումներով:

5. Տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է՝ համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը:

Հոդված 71. Պետության և համայնքի փոխհարաբերությունները

1. Պետությունն իր հնարավորությունների սահմանում միջոցներ է հատկացնում համայնքների համաչափ զարգացումն ապահովելու համար:

2. Պետական մարմինների լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով դրանք օրենքով կարող են պատվիրակվել տեղական ինքնակառավարման մարմիններին և ենթակա են պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորման: Տեղական ինքնակառավարման մարմիններին տրվում է պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացումը տեղական պայմաններին հարմարեցնելու ողջամիտ հայեցողություն: Պետական մարմինների կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին անմիջականորեն առնչվող հարցերի վերաբերյալ որոշումներ ընդունելիս նախապես խորհրդակցում են այդ տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

3. Համայնքի պարտադիր խնդիրների լուծման նպատակով օրենքով սահմանվում են հարկային և ոչ հարկային այնպիսի աղբյուրներ, որոնք անհրաժեշտ են այդ խնդիրների իրականացումն ապահովելու համար:

4. Համայնքի սեփական խնդիրների իրականացման նկատմամբ գործադիր իշխանության համակարգի մարմինն օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում է օրինականությանը և սահմանադրական սկզբունքների ապահովմանն ուղղված իրավական հսկողություն:

5. Պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման նկատմամբ գործադիր իշխանության համակարգի մարմիններն օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում են իրավական և մասնագիտական հսկողություն:

Հոդված 72. Տեղական ինքնակառավարման մարմինները

1. Տեղական ինքնակառավարման մարմիններն են համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, որոնք ընտրվում են հինգ տարի ժամկետով: Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի ընտրություններն անցկացվում են համամասնական ընտրակարգով՝ համայնքի ղեկավարի

անուղղակի ընտրությամբ: Ընտրական օրենսգրքով բացառիկ դեպքերում կարող է սահմանվել համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի ընտրությունների մեծամասնական ընտրակարգ:

2. Օրենքով նախատեսված դեպքերում համամասնական ընտրակարգով ընտրված համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվելու դեպքում համայնքի ավագանին իր կազմից ընտրում է համայնքի ղեկավար:

3. Օրենքով կարող են նախատեսվել համայնքի ղեկավարի տևական բացակայության այն հիմքերը, որոնց դեպքում Կառավարությունը կարող է նշանակել համայնքի ղեկավարի պաշտոնակատար: Համայնքի ղեկավարի պաշտոնակատարի լիազորությունները չեն կարող տևել վեց ամսից ավելի, իսկ այդ ժամկետի ավարտից հետո անցկացվում են նոր ընտրություններ:

4. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կարգը սահմանվում է Ընտրական օրենսգրքով:

5. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները լինում են սեփական՝ համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով, ինչպես նաև պետության կողմից պատվիրակված:

6. Համայնքի ավագանին՝

1) օրենքով սահմանված կարգով տնօրինում է համայնքի սեփականությունը.

2) համայնքի ղեկավարի ներկայացմամբ ընդունում է համայնքի բյուջեն.

3) օրենքով սահմանված դրույքաչափերի շրջանակներում սահմանում է տեղական հարկեր և տուրքեր.

4) համայնքի մատուցած ծառայությունների համար կարող է սահմանել համայնքի բյուջե մուտքագրվող վճարներ.

5) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

7. Համայնքի ավագանու նիստն իրավազոր է, եթե նիստի սկզբում գրանցվել է ավագանու անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

8. Համայնքի ղեկավարը պատասխանատու է համայնքի ավագանու առջև, կատարում է համայնքի ավագանու որոշումները, իրականացնում է համայնքի աշխատակազմի ընդհանուր ղեկավարումը և օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 73. Բնակիչների մասնակցությունը համայնքային հարցերի լուծմանը

1. Համայնքի բնակիչները կարող են օրենքով սահմանված կարգով՝ տեղական հանրաքվեի և օրենքով սահմանված այլ եղանակներով, անմիջականորեն մասնակցել համայնքային նշանակության հանրային հարցերի լուծմանը:

2. Տեղական հանրաքվե նախաձեռնելու իրավունք ունեն համայնքի ավագանին, համայնքի ղեկավարը, համայնքի բնակիչները: Համայնքների միավորման կամ բաժանման հարցերով տեղական հանրաքվե կարող է նախաձեռնել միայն Կառավարությունը: Օրենքով սահմանված դեպքերում և կարգով հնարավոր է իրականացնել նաև տեղական հանրաքվե մի քանի համայնքներում համատեղ:

3. Տեղական հանրաքվեն նշանակում է համայնքի ղեկավարը, իսկ Կառավարության նախաձեռնության դեպքում տեղական հանրաքվեն նշանակում է Կառավարությունը:

Գլուխ 10. ԱՆԿԱԽ ԵՎ ԻՆՔՆԱՎԱՐ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐ

Հոդված 74. Անկախ պետական մարմինների կազմը և կազմավորման կարգը, Մարդու իրավունքների հանձնակատարի ընտրությունը, անկախ պետական մարմինների և Մարդու իրավունքների հանձնակատարի կարգավիճակը

1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, Կենտրոնական բանկը, Հաշվեքննիչ պալատը անկախ պետական մարմիններ են: Մարդու իրավունքների հանձնակատարը անկախ պաշտոնատար անձ է:

2. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, Կենտրոնական բանկը, Հաշվեքննիչ պալատը ղեկավարվում են կոլեգիալ կարգով և կազմված են նախագահից և մյուս վեց անդամներից:

3. Անկախ պետական մարմինների նախագահին և մյուս անդամներին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, հինգ տարի ժամկետով: Անկախ պետական մարմնի անդամներից մեկն ընտրվում է ընդդիմադիր խմբակցությունների առաջադրմամբ:

4. Մարդու իրավունքների հանձնակատարին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, յոթ տարի ժամկետով՝ առանց վերընտրվելու իրավունքի: Եթե Մարդու իրավունքների հանձնակատար չի ընտրվում, ապա անցկացվում է ընտրության երկրորդ փուլ, որի դեպքում Մարդու իրավունքների հանձնակատարն ընտրվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

5. Անկախ պետական մարմնի անդամ, Մարդու իրավունքների հանձնակատար կարող են ընտրվել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն և բարձրագույն կրթություն ունեցող յուրաքանչյուր ոք: Նրանց համար օրենքով կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ:

6. Անհամատեղելիության պահանջների խախտման դեպքում անկախ պետական մարմնի անդամի կամ Մարդու իրավունքների հանձնակատարի լիազորությունները դադարեցնում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով:

7. Մարդու իրավունքների հանձնակատարի լիազորությունները դադարում են նրա լիազորությունների ժամկետն ավարտվելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելու, նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու, նրան անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու, նրա մահվան, հրաժարականի դեպքերում:

8. Սույն գլխի կարգավորումները չեն տարածվում Բարձրագույն դատական խորհրդի և Դատախազական խորհրդի նկատմամբ:

Հոդված 75. Անկախ պետական մարմինների, մարդու իրավունքների հանձնակատարի գործառույթները, լիազորությունները, գործունեության երաշխիքները

1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմակերպում է Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, հանրաքվեները, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում դրանց օրինականության նկատմամբ: Ընտրական հանձնաժողովների համակարգը, ընտրական հանձնաժողովների լիազորությունները, կազմավորման և գործունեության կարգը, գործունեության երաշխիքները սահմանվում են Ընտրական օրենսգրքով:

2. Կենտրոնական բանկը Հայաստանի Հանրապետության ազգային բանկն է, որը թողարկում է Հայաստանի Հանրապետության արժույթը՝ հայկական դրամը: Կենտրոնական բանկի հիմնական նպատակներն են գների և ֆինանսական կայունության ապահովումը՝ նպաստելով երկարաժամկետ տնտեսական զարգացմանը և հանրային բարեկեցությանը: Կենտրոնական բանկը օրենքով կարող է ունենալ նաև այլ գործառույթներ:

3. Հաշվեքննիչ պալատը հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում հաշվեքննություն է իրականացնում պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցների, մուտքերի և ելքերի, ստացած փոխառությունների ու վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ: Հաշվեքննիչ պալատն իրավաբանական անձանց մոտ ստուգումներ կատարելու իրավունք ունի օրենքով սահմանված դեպքերում:

4. Մարդու իրավունքների հանձնակատարը հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ «Մարդու իրավունքների հանձնակատարի մասին» օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, խթանում է մարդու իրավունքների և ազատությունների իրականացումը, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը:

5. Մարդու իրավունքների հանձնակատարը իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել իր կարգավիճակից բխող գործողությունների համար: Մարդու իրավունքների հանձնակատարի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցը Ազգային ժողովը լուծում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով:

6. Պետությունն ապահովում է Մարդու իրավունքների հանձնակատարի գործունեության պատշաճ ֆինանսավորումը: Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են օրենքով սահմանված կարգով Մարդու իրավունքների հանձնակատարին տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր, տեղեկություններ և պարզաբանումներ, ինչպես նաև աջակցել նրա աշխատանքներին:

7. Անկախ պետական մարմինների լիազորությունները, գործունեության կարգը և երաշխիքները սահմանվում են օրենքով, իսկ Մարդու իրավունքների հանձնակատարինը՝ «Մարդու իրավունքների հանձնակատարի» մասին օրենքով:

8. Անկախ պետական մարմինները և Մարդու իրավունքների հանձնակատարը տարեկան հաղորդում են ներկայացնում Ազգային ժողով իրենց գործունեության մասին:

Հոդված 76. Ինքնավար պետական մարմինները

1. Պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված օրենքով կարող են ստեղծվել ինքնավար պետական մարմիններ:

2. Ինքնավար մարմինները ղեկավարվում են կոլեգիալ կարգով, բացառությամբ ինքնավար քննչական մարմնի: Ինքնավար մարմնի անդամները, ինչպես նաև ինքնավար քննչական մարմնի ղեկավարը նշանակվում են պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Կոլեգիալ կարգով ղեկավարվող ինքնավար մարմնի անդամներից մեկը նշանակվում է ընդդիմադիր խմբակցությունների առաջադրմամբ:

3. Ինքնավար մարմինների լիազորությունները, անկախության երաշխիքները, անդամներին ներկայացվող պահանջները և գործունեության կարգը սահմանվում են օրենքով:

Գլուխ 11. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ, ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՔՎԵ

Հոդված 77. Սահմանադրության ընդունումը և փոփոխությունը

1. Սահմանադրությունը կամ Սահմանադրության փոփոխություններն ընդունվում են հանրաքվեի միջոցով:

2. Սահմանադրություն ընդունելու նախաձեռնության իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը, Կառավարությունը կամ ընտրական իրավունք ունեցող երկու հարյուր հազար քաղաքացի: Սահմանադրություն փոփոխելու նախաձեռնության իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը, Կառավարությունը կամ ընտրական իրավունք ունեցող հարյուր հիսուն հազար քաղաքացի:

3. Ազգային ժողովը Սահմանադրության կամ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու մասին որոշումն ընդունում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով:

Հոդված 78. Սահմանադրության անփոփոխելի հոդվածները

1. Սահմանադրության 1-ին հոդվածը, 2-րդ հոդվածը, 3-րդ հոդվածը, 4-րդ հոդվածը, 19-րդ հոդվածի 1-ին մասը, 12-րդ հոդվածի 1-ին մասը, 20-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և սույն հոդվածը փոփոխման ենթակա չեն:

Հոդված 79. Քաղաքացիական նախաձեռնության կարգով ներկայացված օրենքի նախագծի վերաբերյալ հանրաքվեն

1. Եթե Ազգային ժողովը մերժում է Սահմանադրության 38-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով ներկայացված օրենքի նախագծի ընդունումը, ապա մերժումից հետո՝ հարյուր քսան օրվա

ընթացքում, օրենքի նախագծի ընդունման նախաձեռնությանն ընտրական իրավունք ունեցող երկու հարյուր հազար քաղաքացու միանալու դեպքում նախագիծը դրվում է հանրաքվեի, եթե Սահմանադրական դատարանը նախագիծը ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Քաղաքացիական նախաձեռնության մասնակիցների ստորագրությունների վավերականությունը հաստատում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

2. Հանրաքվեի միջոցով ընդունված օրենքները կարող են փոփոխվել հանրաքվեով: Նման փոփոխություն կարող է կատարվել համապատասխան օրենքի ընդունումից առնվազն մեկ տարի հետո:

3. Հանրաքվեի չեն կարող դրվել այն օրենքների նախագծերը, որոնք վերաբերում են սահմանադրական օրենքների իրավակարգավորման առարկային, պետական բյուջեին, հարկերին, տուրքերին, այլ պարտադիր վճարների, համաներմանը, պետության պաշտպանությանը և անվտանգությանը, միջազգային պայմանագրերին, ինչպես նաև «Հանրաքվեի մասին» օրենքով սահմանված այլ հարցերի:

Հոդված 80. Վերպետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության և տարածքի փոփոխության հարցերով հանրաքվեները

1. Վերպետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքի փոփոխությանը վերաբերող հարցերը լուծվում են հանրաքվեների միջոցով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքում հանրաքվե անցկացնելու վերաբերյալ որոշումը Կառավարության առաջարկությամբ ընդունում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Հոդված 81. Հանրաքվեի նշանակումը և անցկացումը

1. Քաղաքացիական նախաձեռնության կարգով ներկայացված օրենքի նախագծի վերաբերյալ Սահմանադրական դատարանի կողմից՝ Սահմանադրությանը համապատասխանության մասին որոշումն ընդունվելուց, ինչպես նաև Ազգային ժողովի կողմից հանրաքվե անցկացնելու մասին որոշումն ընդունվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, Հանրապետության նախագահը նշանակում է հանրաքվե: Հանրաքվեն անցկացվում է հանրաքվե նշանակվելուց ոչ շուտ, քան հիսուն, և ոչ ուշ, քան վաթսունհինգ օր հետո:

2. Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ հանրաքվե չի անցկացվում:

Հոդված 82. Հանրաքվեի դրված ակտի ընդունումը

1. Հանրաքվեի դրված ակտն ընդունվում է, եթե դրան կողմ է քվեարկել հանրաքվեի մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան հանրաքվեներին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների մեկ քառորդը:

2. Հանրաքվեի դրված Սահմանադրությունը կամ Սահմանադրության փոփոխություններն ընդունվում են, եթե դրան կողմ է քվեարկել հանրաքվեի մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան հանրաքվեներին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների մեկ երրորդը:

Գլուխ 12. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 83. Սահմանադրության ուժի մեջ մտնելը

1. Սահմանադրությունն ուժի մեջ է մտնում Սահմանադրության պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն գլխով նախատեսված դեպքերի:

2. Սահմանադրության 4-11-րդ գլուխները, բացառությամբ 30-րդ և 35-րդ հոդվածների, ուժի մեջ են մտնում Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման պահին:

3. Սահմանադրության 30-րդ և 35-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում Սահմանադրության 84-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ Ընտրական օրենսգրքի և Ազգային ժողովի կանոնակարգի փոփոխություններն ուժի մեջ մտնելու օրը, սակայն ոչ ուշ, քան Սահմանադրության պաշտոնական հրապարակումից մեկ տարի հետո:

4. Սահմանադրության ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած է ճանաչվում 1995 թվականի հուլիսի 5-ի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը՝ 2015 թվականի փոփոխություններով, եթե սույն գլխով այլ բան նախատեսված չէ: Եթե սույն գլխով Սահմանադրության որևէ նորմի ուժի մեջ մտնելու համար սահմանված է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետից առավել ուշ ժամկետ, ապա մինչև այդ նորմի ուժի մեջ մտնելը շարունակում են գործել 1995 թվականի հուլիսի 5-ի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ 2015 թվականի փոփոխություններով համապատասխան նորմերը, որոնք ուժը կորցրած են ճանաչվում սույն Սահմանադրության համապատասխան նորմերն ուժի մեջ մտնելու օրվանից:

5. Մինչև Սահմանադրության ուժի մեջ մտնելն ընդունված օրենքները և այլ նորմատիվ իրավական ակտերը շարունակում են գործել: Սահմանադրության հետ հակասության դեպքում դրանք ենթակա են համապատասխանեցման Սահմանադրությանը:

6. Մինչև Սահմանադրության ուժի մեջ մտնելը գործող պետական մարմինները շարունակում են գործել: Սահմանադրության հետ անհամապատասխանության դեպքում դրանց գործունեությունը ենթակա է համապատասխանեցման Սահմանադրությանը՝ սույն գլխով սահմանված առանձնահատկություններով:

Հոդված 84. Օրենքների համապատասխանեցումը Սահմանադրությանը

1. Ընտրական օրենսգիրքը և Ազգային ժողովի կանոնակարգը համապատասխանեցվում են Սահմանադրությանը Սահմանադրության ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում: Այլ սահմանադրական օրենքները համապատասխանեցվում են Սահմանադրությանը և ուժի մեջ են մտնում Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման պահին:

2. Պետական խորհրդանիշների նկարագրությունը սահմանող օրենքները պահպանում են իրենց ուժը, սակայն դրանցում փոփոխություն նախատեսող օրենքների կամ պետական խորհրդանիշների նկարագրություն սահմանող նոր օրենքների ընդունման դեպքում կիրառվում է Սահմանադրության 16-րդ հոդվածը:

Հոդված 85. Դատավորների վերագնահատումը

1. Դատական իշխանության նկատմամբ վստահությունն ամրապնդելու, դատավորների և դատարանների անկախությունը երաշխավորելու նպատակով Սահմանադրության ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ հինգ տարվա ընթացքում իրականացվում է Սահմանադրության ուժի մեջ մտնելու պահին պաշտոնավարող դատավորների մեկանգամյա վերագնահատում: Սույն հոդվածով նախատեսված կարգով վերագնահատման ենթակա են Վճռաբեկ դատարանի, վերաքննիչ դատարանների և առաջին ատյանի ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների դատավորները, ինչպես նաև Բարձրագույն դատական խորհրդի դատավոր չհանդիսացող անդամները, որոնց նկատմամբ կիրառվում են սույն հոդվածում նշված դատավորների համար նախատեսված կանոնները:

2. Սահմանադրության ուժի մեջ մտնելու օրվանից սույն հոդվածի 1-ին մասում նշված դատավորները շարունակում են իրականացնել դատավորի լիազորությունները՝ որպես դատավորի ժամանակավոր պաշտոնակատարներ, մինչև օրենքով սահմանված կարգով նրանց վերագնահատման արդյունքների հիման վրա դատավորի պաշտոնում նշանակումը կամ դատավորի ժամանակավոր պաշտոնակատարի լիազորությունների դադարեցումը:

3. Արդարադատություն իրականացնելիս դատավորի ժամանակավոր պաշտոնակատարներն օժտված են դատավորների համար Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված լիազորությունների նույն ծավալով:

4. Մեկանգամյա վերագնահատումն իրականացվում է գնահատվող դատավորի պաշտոնակատարի հիմնական իրավունքների հարգման սկզբունքի պահպանմամբ:

5. Դատավորների վերագնահատումը ներառում է դատավորի բարեվարքության ստուգումը պաշտոնը ստանձնելու պահից, այդ թվում՝ վարքագծի կանոնների, շահերի բախման կանոնների պահպանումը, անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահպանումը, մասնագիտական կարողությունների ստուգումը, գույքային դրության համապատասխանության ստուգումը՝ ըստ օրինական եկամուտների:

6. Վերագնահատումն իրականացնում է սույն հոդվածով նախատեսված նպատակով և ժամկետով ստեղծվող Դատավորների վերագնահատման հանձնաժողովը: Հանձնաժողովն իր լիազորություններն իրականացնելիս անկախ է պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններից և պաշտոնատար անձանցից: Դատավորների վերագնահատման գործընթացում խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են ներգրավվել նաև փորձագետներ:

7. Դատավորների վերագնահատման հանձնաժողովի անդամներին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Դատավորների վերագնահատման հանձնաժողովը կազմված է հինգ անդամից, որոնցից երկուսն ընտրվում են Հանրապետության նախագահի, երկուսը՝ Մարդու իրավունքների հանձնակատարի, մեկը՝ Կառավարության առաջարկությամբ:

8. Վերագնահատման արդյունքներով Դատավորների վերագնահատման հանձնաժողովը կազմում է դատավորի ժամանակավոր պաշտոնակատարի բարեվարքության վերաբերյալ դրական կամ բացասական եզրակացություն, որը ներկայացվում է Հանրապետության նախագահին:

9. Դրական եզրակացության հիման վրա Հանրապետության նախագահը վերագնահատված դատավորի ժամանակավոր պաշտոնակատարին մեկամսյա ժամկետում նշանակում է դատավորի պաշտոնում կամ իր առարկություններով վերադարձնում է դրական եզրակացությունը Դատավորների վերագնահատման հանձնաժողով, եթե գտնում է, որ առկա է բարեվարքության պահանջների էական խախտման դեպք: Եթե Դատավորների վերագնահատման հանձնաժողովը մեկամսյա ժամկետում չի ընդունում այդ առարկությունը և կրկին Հանրապետության նախագահին է ներկայացնում դրական եզրակացություն, ապա Հանրապետության նախագահը վերագնահատված դատավորի ժամանակավոր պաշտոնակատարին մեկամսյա ժամկետում նշանակում է դատավորի պաշտոնում կամ դիմում է Սահմանադրական դատարան: Եթե Հանրապետության նախագահը չի կատարում սույն հոդվածի պահանջները սահմանված ժամկետներում, ապա տվյալ անձը համարվում է նշանակված դատավորի պաշտոնում իրավունքի ուժով:

10. Բացասական եզրակացության հիման վրա Հանրապետության նախագահը մեկամսյա ժամկետում հրամանագիր է ընդունում վերագնահատված դատավորի ժամանակավոր պաշտոնակատարին դատավորի պաշտոնում չնշանակելու և դատավորի ժամանակավոր պաշտոնակատարի լիազորությունները դադարեցնելու մասին կամ իր առարկություններով վերադարձնում է բացասական եզրակացությունը Դատավորների վերագնահատման հանձնաժողով, եթե գտնում է, որ առկա չէ բարեվարքության պահանջների էական խախտման դեպք: Եթե Դատավորների վերագնահատման հանձնաժողովը մեկամսյա ժամկետում չի ընդունում այդ առարկությունը և կրկին Հանրապետության նախագահին է ներկայացնում բացասական եզրակացություն, ապա Հանրապետության նախագահը մեկամսյա ժամկետում հրամանագիր է ընդունում վերագնահատված դատավորի ժամանակավոր պաշտոնակատարին դատավորի պաշտոնում չնշանակելու և դատավորի ժամանակավոր պաշտոնակատարի լիազորությունները դադարեցնելու մասին կամ դիմում է Սահմանադրական դատարան: Եթե Հանրապետության նախագահը չի կատարում սույն հոդվածի պահանջները սահմանված ժամկետներում, ապա դատավորի ժամանակավոր պաշտոնակատարի լիազորությունները համարվում են դադարեցված իրավունքի ուժով:

11. Դատավորի ժամանակավոր պաշտոնակատարի բարեվարքության վերաբերյալ Դատավորների վերագնահատման հանձնաժողովի եզրակացությունները ենթակա չեն վերանայման դատական կարգով:

12. Դատավորի ժամանակավոր պաշտոնակատարը կարող է իր պաշտոնում չնշանակվելը և լիազորությունների դադարեցումը բողոքարկել Սահմանադրական դատարան:

13. Կոռուպցիայի կանխարգելման համար ստեղծված ինքնավար պետական մարմինն աջակցում է Դատավորների վերագնահատման հանձնաժողովի լիազորությունների իրականացմանը, նախապատրաստում և տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն եզրակացությունների կազմման համար:

14. Դատավորների վերագնահատման հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգի, դատավորի մեկանգամյա վերագնահատման կարգի այլ մանրամասները սահմանվում են օրենքով:

Հոդված 86. Դատախազական խորհրդի ձևավորումը

1. Դատախազական խորհուրդը, Սահմանադրության 67-րդ հոդվածին համապատասխան, կազմավորվում և իր լիազորությունները ստանձնում է Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

2. Մինչև Դատախազական խորհրդի կազմավորման և լիազորությունների ստանձնման օրը Սահմանադրությամբ Դատախազական խորհրդին վերապահված լիազորությունները, որոնք մինչև սույն Սահմանադրության ուժի մեջ մտնելու օրը իրականացնում էին այլ պետական մարմիններ կամ պաշտոնատար անձինք, շարունակում են իրականացնել այդ մարմինները կամ պաշտոնատար անձինք՝ 2015 թվականի փոփոխություններով 1995 թվականի հուլիսի 5-ի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն:

Հոդված 87. Սահմանադրությամբ նախատեսված մարմինների անդամների և պաշտոնատար անձանց պաշտոնավարումը

1. Սահմանադրության ուժի մեջ մտնելուց հետո 2015 թվականի փոփոխություններով 1995 թվականի հուլիսի 5-ի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված պետական մարմինների անդամները և պաշտոնատար անձինք շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց լիազորությունների ժամկետի ավարտը՝ սույն գլխով սահմանված բացառություններով:

2. Մինչև Սահմանադրության ուժի մեջ մտնելն ընտրված կամ նշանակված պաշտոնատար անձանց նկատմամբ նույնպես կիրառվում են Սահմանադրությամբ նախատեսված վերընտրման կամ վերանշանակման սահմանափակումները:

3. Մինչև Սահմանադրության 10-րդ գլխի ուժի մեջ մտնելն ընտրված Կենտրոնական բանկի նախագահի տեղակալները և խորհրդի անդամները շարունակում են պաշտոնավարել որպես Կենտրոնական բանկի անդամներ:

4. Մինչև Սահմանադրության ուժի մեջ մտնելն ընտրված Մարդու իրավունքների պաշտպանը շարունակում է պաշտոնավարել որպես Մարդու իրավունքների հանձնակատար:

Հոդված 88. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

1. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը՝ որպես անկախ պետական մարմին, շարունակում է գործել մինչև Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի գործառույթներն իրականացնող ինքնավար մարմնի ձևավորումը, սակայն ոչ ուշ, քան Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրվանից մեկ տարին լրանալը: Այդ ընթացքում Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի գործառույթներն իրականացնող ինքնավար մարմին չձևավորվելու դեպքում Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի գործունեությունը և դրա անդամների լիազորությունները համարվում են դադարած:

Հոդված 89. Վերպետական միջազգային կազմակերպության անդամակցությունը կասեցնելը կամ չեղյալ հայտարարելը

1. Վերպետական միջազգային կազմակերպության անդամակցությունը կասեցնելու կամ չեղյալ հայտարարելու հարցը լուծվում է Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի կասեցման կամ չեղյալ հայտարարելու կանոններով այն դեպքում, երբ տվյալ վերպետական կազմակերպությանը Հայաստանի Հանրապետությունը անդամակցել է մինչև 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 205-րդ հոդվածի ուժի մեջ մտնելը՝ Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացմամբ: